



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

3889

1903

62(=91.54)

S-30



6224.57
S-30

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԵԱՆ

ԵԷտի Գուլէի Հայոց Հիւանդանոցի

(Ա. ՓՐԿԻԶ)

1902 ՅՈՒՆՈՒԱՐ 1 ԷՆ 1903 ՅՈՒՆՈՒԱՐ 1



343

2002

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ

2159154
5-30

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ




ԵԼՄԻ ԳՈՒԼԻ ՀԱՅՈՑ ՀԻՄՆՈՂԱՆՈՑԻ

(Ս. ՓՐԿԻԶ)

1902 ՅՈՒՆՈՒԱՐ 1 ԷՆ 1903 ՅՈՒՆՈՒԱՐ 1

ՋԵԿԵ



Կ. ՊՈՂԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

1903



8826

Տ Ե Ղ Ե Կ ա գ ի ր

Հ Ո Ք Ա Բ Ա Ր Ձ Ո Ւ Թ Ե Ա Ն

ԵԼՏԻ ԳՈՒԼԷԻ ՀԱՅՈՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

1902 Յունուար 1 և 1903 Յունուար 1



Ամենայնաթիւ Արքայական Պատրիարք Հայր

եւ

Պատմաբան Տեարք Անդրակոս Բաղաթ. Պատկառելի Ժողովոյ

Ազգ. Կեդրոնական Վարչութեան

Հոգաբարձութիւնս պատիւ ունի մասուցանել Ամեն. Արքայական Նախագահիդ եւ Պատկ. Ժողովոյդ իւր մասակարարած Հասարակական 1902 տարւոյ ընդհանուր Գործառնութեանց տեղեկագիրք :

Այս առթիւ մեզ հաղորդ պատրաստութիւն մը կը համարիմք երախտագիտութեամբ յայտարարել թէ՛ լիովի վայելած եմք մեր Մեծագոր եւ Սիրեցեալ Կայսեր եւ Իր Կայսերական Բարեխնամ Կառավարութեան հօր պատշապանութիւնն ու շնորհները: Մեր գոհունակութեամբ կը յայտնեմք նաեւ թէ՛ Ձերոյ Արքայական եւ Պատկ. Բաղաթ. Ժողովոյ խնամքն, օժանդակութիւնն ու համարումը վայելած եմք, ինչպէս նաեւ համայն ազգայնոց ամեն դասակարգին հաւասարապէս ցոյց տուած լիակատար վստահութիւնը ու նուերներն ստացած եմք. եւ այս ամենը կը հաշտելեն զմեզ շարունակել Հիւանդանոցիս մասակարարութեան դժուարին հոգը:

Մեր աշխատութեան մեջ օգնած է մեզ Որբանոցի Խնամակալութիւնը, որ ստանձնելով Որբանոց-Արհեստանոցի հոգը՝ ջանադիր ե-

ղած է անոր բարգաւանման: Որբանցի Խնամակալութեան նախկին անդամներուն Տեարց Գ. Ալեանաբեանի, Լ. Բանիկեանի եւ Պ. Քերեսկեանի վրայ վերջերս աւելցան նաեւ Տեարհ Յ. Գորեան եւ Ջ. Ճումարախօսեան: Ուրախ եմք այս առթիւ ծանուցանել Ձերդ Ամենապատուութեան քե՛ Տիկնանց երբեմնի Խնամակալութեան քանի մը անդամներն խոստացած են մեզ վերակազմել Տիկնանց Խնամակալութիւն մը, որոյ պակասն այնչափ զգալի դարձած է:

Այս շրջանին մէջ ալ յասուկ մասնախմբի մը ձեռնով՝ Քեփե-Պաշքի Քաղապետական պարտիզի բաստարանին մէջ տրուած արեւելեան նուագահանդեսէն շուրջ 900 ոսկույ հասոյք մը գոյացաւ նոյն Մասնախմբին Պատ. Անդամոց ջանից շնորհիւ, որոց պատճառով կը համարուիք հրապարակաւ յայտնել մեր ջերմագին շնորհակալիքն:

Արդէն անցեալ տարիէ ծրագրեալ բարեկարգութեանց շարք մը ունենալով, Հոգաբարձութիւնս՝ իր նիւթական միջոցներուն ներածին չափով, յաջողեցաւ անուցմէ քանի մը հասք իրականացնել այս շրջանի մէջ եւ միւսներն ալ պիտի ջանայ գործարել յառաջիկային:

Հաստատութեանս պատասխաններուն քիւր երբալով կը շատնայ եւ ոչ միայն Հիւանդարանի 225 անկողիններն այլ եւս չեն բաւեր հետզհետէ աւելցող հիւանդաց, այլ եւ Որբանցի, Ծերանցի եւ նամանաւանդ Յիմարանցի միշտ լեցուն բաժիններն անբաւական են ներկայ պատասխանելոց:

Հանելի է մեզ յուսալ ուրեմն որ՝ շնորհիւ Ձեր Բարձր. Սրբազնութեան յօտարակամ ջանքերուն եւ Պատկ. Վարչութեանոց օժանդակութեան, մեր եւ ամենուն փափաքն մօտաւոր ժամանակի մէջ իրականութիւն գտնէ շինութեամբ Հիւանդարանի Գ.րդ քեղին, Մասրան եւ Նոր Որբանցին:

Ներկայ տեղեկագիրս ալ իր նախորդներուն նման երեք մասերէ կը բաղկանայ.

Ա. Տեղեկագիր Հաստատութեանս մէն մի բաժնի. որք էն, Հիւանդանոց, Որբանոց, Անկեղանոց-Ծերանոց, Ուսանողաց պատասխան եւ Մոմարան:

Բ. Տեղեկագիր Հաստատութեանս պէտքերը լեցնող բաժիններուն. որք էն, Գեղարան, Հանդերձատուն, Մառան, Անասարան, Խոհանոց, Արհեստանոց, Մատու, Մատենադարան, Գիւան, Պարտէզ եւ Հրապարակ:

Գ. Տեղեկագիր Հաստատութեանս Կալուածոց Գոյից եւ Ելեմսից:

Եւ վերջապէս իբր յաւելուած, ցանկ Հաստատութեանս պատկանող:

Գրութեան այս յարկը շէն մնալու համար կը կարօտի Մեծագոր Օսմանեան Կառավարութեան ու Նորին Կայսերական Վեհափառութեան շնորհներուն եւ միանգամայն Ձեր Սրբազնութեան ու Պատ. Քաղաք. Ժողովրդի հոգածութեան եւ քննհանրապէս Հայ Ազգին նիւթական ու բարոյական ձեռննուութեան:

Հոգաբարձութիւնս յուսալից է քե՛ Սրբազան Հայրդ եւ Պատկառելի Ժողովրդ պիտի շարունակեն իրենց հզօր աջակցութիւնը ընձեռել մեզ նաեւ յառաջիկային, եւ կը խնդրենք, Սրբազան Հայր, որ բարեհաճիք օրհնել Հաստատութեանս բոլոր աշխատողները եւ սասարողներն:

Մասշերով ի համբոյր Սրբազնած Աջոյդ

Մնամք ամենախորին յարգանքով

Անդամք Հոգաբարձութեան Երեսի-Գորշի Ազգ. Հիւանդանոցի

Ասենապայիր	Ասենապետ
Գ. Մ. ԱԼԵԱՆԱՔԵԱՆ	ՊԱՏՐԻԿ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ
	Անդամք
ՏՕՔ. ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ	ՏԻԳՐԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՏՕՔ. Ս. ՆԱԶԱՐԵԱՆ	Յ. ՍՔԱՆՊՕԼԼՈՒԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԷՎՐԷՆԵԱՆ	Գ. ԿԻՍԻՒՇԿԵՐՏԱՆ



ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՍ ԶԱՆԱԶԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Լ Ի Բ Ա Ն Գ Ա Ն Ո Ց

1. Ն Ե Ր Ք Ի Ն Հ Ի Ի Ա Ն Գ ՈՒ Թ Ե Ա Ն Ց Բ Ա Ժ Ի Ն

1902 Յունուար 1 էն մինչեւ 1903 Յունուար 1

Վսեմաշոյք Ասեմայեւ ԷՎէնի

եւ

Պասաւրժան Տեարք Անդաւի՛ Մեղուացան Հոգաբարձութեան

Եհի-Գուշեի Ազգ. Հիւանդանոցին

Ի Մեծ Նոր Խան

Բարեւէր և ժրաջան Տեա՛րք,

Վերջացող 1902 տարւոյ Հաստատութեանս ներքին հիւանդութեանց բաժնոյն ներկայ Տեղեկագիրս պատրաստեալ է ըստ ամենայնի հետեւողութեամբ նախորդ տարիներու ծրագրոյն :

Հ Ի Ի Ա Ն Գ Ա Ն Ո Ց

Հիւանդանոցիս բաժանումներն և պաշտօնէութիւնն նոյնն են նախորդ տարիներու, ուստի և առ այդ սե է կրկնութիւններ ընել աւելորդ կը համարինք :

Շնորհիւ Հաստատութեանս բարեկարգութեան մասին Ձեր յարատե ջանից և Ազգ. համակրութեան այս գթութեան տան հանդէպ օր քան զօր աճման, կրնամք ըսել այժմէն իսկ թէ Հիւանդանոցս կարողացած է Մայրաքաղաքիս նմանօրինակ տեղական և ևւրոպական հաստատութեանց աստիճանին հասնիլ, բարձուած կրնայ համարուիլ ժողովրդեան մէջ արմատացեալ Հաստատութեանս մասին ունեցած թիւր նախապաշարումը. հիւանդք սիրով կը դիմեն այս Ազգ. տունը, որով և հիւանդաց թիւը յարատեւ զգալի աճում մը կը կրէ և մեր սրահներ այլ ևս սկսած են նեղ զալ, աւելի քան երբէք զգալի դարձած է Հաստատութեանս բուն հիւանդարանի յատկացուելիք երրորդ ճիւղի շինութիւնը, և լաղձալի է որ Պատ. Հոգաբարձութիւնդ քիչ ժամանակէն զայն իրագործէ :

Անշուշտ այդ բազկի շինութեան առթիւ նկատի պիտի առնուին նաև աչքի, խոջակի և ականջի հիւանդութեանց բաժիններ յատկացնելու առաջարկս՝ զոր քանիցս ներկայացուցած եմ Պատ. Հոգաբարձութեանդ՝ և որ սկզբամբ Ձեր հաւանութեան արժանացած է :

Հաւանականաբար և այդ առթիւ պիտի ձեռնարկէք Հիւանդանոցիս Դեղարանի վերաշինութեան՝ որ Հաստատութեանս միակ փայտաչէն մասը մնացած է : Թոյլ տուք որ անգամ մ'ևս յիշեցնեմ Ձեզ հականերսական մեծ ջերոցի մը պէտքը և անոր յատուկ վայրի մը շինութիւնը՝ ուր կարենանք տարափոխիկ հիւանդութեան ենթարկելոց անկողինները, աւարկաները և զգեստները հականերսել :

Բնականաբար այդ նոր շինութեանց առթիւ յիմարաց աւելի ընդարձակ յարկաբաժիններ պիտի մնան ու անդ յիմարք պիտի ունենան և մասնաւոր սենեակներ : Քաղցր է մեզ յուսալ թէ Պատ. Հոգաբարձութիւնդ ի մտոյ պիտի ձեռնարկէ նաև Կանանց յիմարանոցի համար առանձնացման խցիկներու շինութիւնը՝ զոր սկզբամբ ընդունած և որոյ պէտքն անհրաժեշտ դատած էք արդէն :

ԳԼՈՒԽ Բ.

Հ Ի Խ Ա Ն Գ Ք

Հիւանդաց Թիւր. — 1902 ի տարեշրջանին հիւանդարանի բժշկական բաժնոյն մէջ դարմանեալ 1485 հիւանդաց 1398ը մեկնած են իսկ վիրարութեան բաժնէն մեկնած են 570 հիւանդք, ընդամենը 1968 հիւանդք, սակայն Հաստատութեանս մայր տղմարին մէջ նշանակեալ են միայն 1923 հիւանդ, զի 45 հիւանդներ թէ բժշկական և թէ վիրարութեան բաժիններու մէջ իրենց տարրեր հիւանդութեանց համար դարման ընդունած են և մի անգամ արձանագրուած :

Հիւանդաց թուոյն տարուէ տարի աճումը կը ցուցնէ յետագայ ցուցակը :

1899 ին	1638 հիւանդ	1901 ին	1931 հիւանդ
1900 ին	1840 »	1902 ին	1968 »

Այս թիւերուն մէջ չկան Հաստատութեանս բժշկաց կողմանէ տուրի վրայ դարմանուող սրաչափեաները, պատուաբեալները և զրտէն Հաստատութեանս բժշկաց խորհրդատուութեան ղեկավարները :

Հիւանդաց Սեւր. — Միշտ Հիւանդանոցս ղեկավարաց մեծագոյն մասը այրեր են և ինչպէս նախորդ տարիներու տեղեկագրաց մէջ ղիտել տուած եմք, միջին հաշուով հիւանդաց $\frac{3}{4}$ ր այր և $\frac{1}{4}$ ր կիներ են : Մեր կանայք դեռ վարժուած չ'են Հիւանդանոց ղեկավար : Ահաւասիկ ըստ սեռի հիւանդաց բաղդատական ցուցակը :

Պատրաստ 1902 Յունուար 1 ին	Այր 69	Կին 25	Գումար 94
Ընդունուած 1902 տարւոյն մէջ	» 1039	» 352	» 1391
	1108	377	1485
Պատրաստ 1903 Յունուար 1 ին	» 68	» 19	» 87
	1040	358	1398

Հիւանդները ուսի՞ կուգան. — Այս տարուան շրջանին մէջ Հիւանդանոցիս ներքին հիւանդութեանց բաժնին ընդունուող 1391 հիւանդաց 1013ը զրտէն եկած են և 378ը Հաստատութեանս զանազան յարկերէն սրք ըստ յետագայ ցուցակին կը բաժնուին :

Որբանոցէն	այր 85	Կին 74	Գումար 159
Ծերանոցէն	» 51	» 28	» 79
Յիմարանոցէն	» 75	» 34	» 109
Ուսանողներէն	» 3	» ..	» 3
Պաշտօնեայ	» 21	» 7	» 28
	Գումար 235	143	378

Հիւանդաց Հայրենիք. — Ներքին հիւանդութեանց բաժնին մէջ դարմանուած 1398 հիւանդաց 745ը տեղացիներ են, 653ը զրտեցիներ, որոց աւագ մեծամասնութիւնը Թուրքիոյ գաւառներէն, յորս և ունեցանք 25 օտարազգիներ, 14 Թուրք, 9 Յոյն, 1 Հրեայ և 1 Պարսիկ :

Հիւանդանոցս ղեկավար օտարազգեաց թուոյն աճումը ևս ապացոյց մէ Հաստատութեանս վարկի բարձրացման և այս թիւը շատ աւելի պիտի բլար, եթէ երբէք մեր դռները բանայինք այնպէս լայնօրէն որպէս կընենք մերազնէից համար :

Հիւանդներու քիւն ըստ ամսոց. — Վերջացող տարւոյս շրջանին մէջ մեր սրահները ղեկավար հիւանդները ըստ մտից ամսոց յետագայ ցուցակով կը պատկերանան :

		Փոխադրեալ 744
Յունուար	128	Յուլիս 116
Փետրուար	90	Օգոստոս 107
Մարտ	160	Սեպտեմբեր 91
Ապրիլ	123	Հոկտեմբեր 111
Մայիս	137	Նոյեմբեր 136
Յունիս	106	Դեկտեմբեր 93
	Փոխադրելի 744	1398

Ինչպէս նախորդ տարիները նոյնպէս և այս տարի չենք ուզեր ու է եզրակացութիւն մը հանել այս թիւերէն, որպէս ըսած ենք արդէն, առ այս դեռ շատ մը տարիներու թիւերը հարկ են մեզ :

Հիւանդաց սարիք. — Մեր բաժնոյն մէջ դարմանեալ հիւանդները ըստ իրենց հասակի յետագայ կերպով կը դասակարգուին :

		Փոխադրեալ	
1—10 տարեկան	108	51—60 տարեկան	190
11—20 »	228	61—70 »	176
21—30 »	222	71—80 »	55
31—40 »	174	81—90 »	9
41—50 »	232	91—100 »	4
Փոխադրելի		964	1398

Ըստ այս ցուցակի ամենէ աւելի հիւանդացողները 41—50 տարեկան անձերն են. ապա գան 21—30, 11—20, 51—60, 61—70 տարեկանները և չն: Այս ցուցակին մէջ 11—20 տարեկան սրտանիւններու թուոյն առաւելութիւնը ընտանիքէ և սա Հաստատութեանս Որբանոց մ'ունենալուն և նամանաւանդ այս տարի այդ Որբանոցի մէջ հարսանիքի համաճարակ մը տեղի ունենալուն հետեւանքն է. իսկ ծերունեաց թուոյն նուազութիւնը կենաց տեղութեան նուազման արդիւնքն է, որպէս զիտեղ տուած ենք և նախորդ տարիները:

Երբեմն՝ գաւառացի երիտասարդները միայն հիւանդութեանց առթիւ ստիպեալ կը դիմէին Հիւանդանոցս, իսկ մայրաքաղաքացիք միայն անոք ծերեր կը մատակարարէին. այժմ մի քանի տարիներէ ի վեր Հաստատութեանս վարկի բարձրացման հետեւանք կ'. Պոլսեցի երիտասարդներն աւելի թուօք կը դիմեն Ազգին տունը:

ԳԼՈՒԽ Գ.

Հ Ի Ի Ա Ն Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Ընդհանուր ցուցակ դարմանեալ հիւանդութեանց. — Յետագայ ցուցակաւ, ըստ մեր սովորութեան, կը պատկերեմք այս վերջացող տարւոյս մեր սրահաց մէջ դարմանեալ հիւանդութիւններն և անոնց ելքն, ըստ բժշկական գիտութեան կարգադասելով այդ հիւանդութիւնները:

Հ Ի Ի Ա Ն Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք Շ Ն Չ Ա Ռ Ե Ի Տ Բ Ա Յ Ա Ն Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ի

	Պիւսրս. 1902	Ընդամուտ	Բնականութիւն	Եւզելեալ	Բարւոյնեալ	Արձակեալ	Մեռեալ	Պիւսրս. 1903
Տեւական քծասալ (Rhinite cironique)	0	1	1	1	0	0	0	0
Քթարիւնութիւն (Epistaxis)	0	5	5	5	0	0	0	0
Ուռական խոչասալ (Laryngite tuberculeuse)	1	1	2	0	1	0	1	0
Սուր թորացնցղասալ (Bronchite aiguë)	1	49	50	47	0	1	0	2
Տեւական թորացնցղասալ (Bronchite chronique)	4	17	21	0	16	0	1	4
Փրուոյցային թորացնցղասալ (Bronchite emphysemateuse)	0	2	2	0	2	0	0	0
Թորային փրուոյց (Emphysème pulmonaire)	0	4	4	0	4	0	0	0
Թորային արեւակուսում (Congestion pulmonaire)	0	10	10	9	0	0	0	1
Թորասալ (Pneumonie)	1	22	23	17	0	1	5	0
Յնցղաթորասալ (Bronchopneumonie)	0	2	2	1	0	0	1	0
Մսուռ՝ աջ թորի վերին կողմի (Sarcome du sommet du poumon droit)	0	1	1	0	0	1	0	0
Թորային քաղցկեղ (Gangrène pulmonaire)	1	1	2	1	0	0	1	0
Թորային ուռականութիւն (Tuberculose pulmonaire)	15	161	176	0	74	13	73	16
Թորային ուռականութիւն և ուռական խոչասալ (Tuberculose pulmonaire et laryngée)	0	4	4	0	1	0	2	1
Թորային ուռականութիւն և ուռական աղեսալ (Tuberculose pulmonaire et intestinale)	0	3	3	0	0	0	0	3
Ուռական ախտէտութիւն (Cachexie tubercul)	0	3	3	0	0	0	3	0
Թորաքանոց (Pleurite)	0	4	4	4	0	0	0	0
Ջրգողութիւն թորաքանոցի (Pleurésie avec épanch.)	1	19	20	18	1	0	1	0
Տեւական ջրգողութիւն թորաքանոցի (Pleur. chron.)	0	3	3	1	2	0	0	0
Ջրգողութիւն թորաքանոցի և թորային ուռականութիւն (Pleurésie avec tuberculose pulmon.)	0	1	1	0	1	0	0	0
Ջրոգականութիւն լանջաց և թորային ուռական (Hydropneumothorax avec tuber. pulmon.)	0	1	1	0	0	0	1	0
Լանջարիւնութիւն (Hémothorax)	0	1	1	1	0	0	0	0
	24	315	339	105	102	16	89	27

Հ Ի Ի Ա Ն Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք Ա Ր Բ Ա Ն Շ Բ Չ Ա Ն Ի Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ի

Սրտաքանոց (Péricardite)	0	1	1	0	0	0	0	1
Անբաւականութիւն սրտի խոյրածեղ գոնակի (Insuffisance du valvule mitrale)	3	33	36	0	26	1	7	2
Անծկուութիւն սրտի խոյրածեղ գոնակի (Retrécissement du valvule mitrale)	0	2	2	0	1	0	1	0
Անծկուութիւն մայր շնչերակի գոնակի (Retrécissement aortique)	0	8	8	0	7	0	0	1
Անբաւականութիւն մայր շնչերակի (Insuffis. aortique)	0	3	3	0	2	0	1	0
Անբաւակ. սրտի խոյր. անցից և անծկու. մայր շնչերակի (Insuf. mitrale et retrécis. aort.)	2	9	11	0	10	0	1	0

	Պատիւ. 1902	Ընդամուտ	Բնականապես բնիկ	Բժշկիչ	Բարակեալ	Անանկեալ	Մեռեալ	Պատիւ. 1903
Վարակական սուր սրամկիասայ (Myocardite infectieuse aiguë)	0	1	1	1	0	0	0	0
Սրամկիասայ (Myocardite)	3	46	49	0	33	5	8	3
Սրահասային ախտաբանութիւն (Cachexie cardiaq.)	0	2	2	0	0	0	2	0
Կեղծ կրծամկոնկ (Fausse angine de poitrine)	0	1	1	0	1	0	0	0
Կարծրութիւն շնորակաց (Artériosclérose)	3	11	14	0	11	0	1	2
Երակակեղ (Ulçère variqueux)	0	1	1	1	0	0	0	0
Աւանոթասայ (Lymphangite)	0	1	1	0	0	0	0	1
Թարախուտ աւանոթասայ (Lymphangite suppurée)	0	1	1	1	0	0	0	0
Խոլիասայ (Adénite)	0	1	1	1	0	0	0	0
	11	121	132	4	91	6	21	10

ՀԻՒԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՐՈՂԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿԻ

Աւամնային արեւակուսում (Fluxiondentaire)	0	2	2	2	0	0	0	0
Նշկասայ (Amygdalite)	0	4	4	4	0	0	0	0
Գերածուան նշկաց (Hypertrophie des amygdales)	0	1	1	0	0	0	0	1
Սուր դմային փողացալ (Angine catarrhale aiguë)	0	2	2	2	0	0	0	0
Սուր կոկորդասայ (Pharyngite aiguë)	0	3	3	3	0	0	0	0
Յեւնակոկորդային խոլիասայ (Abcès retro-pharyn.)	0	1	1	1	0	0	0	0
Խանգարումն որկորի (Troubles gastriques)	0	8	8	8	0	0	0	0
Խանգարումն աղեաց եւ որկորի (Troub. gastro-intestinale)	0	6	6	5	1	0	0	0
Ընդլայնումն որկորի (Dilatation de l'estomac)	0	11	11	6	0	4	0	1
Անձկութիւն սորի (Stenose du pylore)	0	1	1	0	0	0	1	0
Կորովասութիւն որկորի եւ աղեաց (Atonie gastro-intestinale)	0	3	3	1	0	0	0	2
Կրճիւն որկորի (Embarras gastrique)	0	45	45	44	0	1	0	0
Փքաբեր դժուարամարսութիւն (Dyspepsie flatul.)	0	1	1	0	0	0	0	1
Սուր որկուրասայ (Gastrite aiguë)	1	27	28	28	0	0	0	0
Սրկորացեմ (Gastrite fébrile)	0	5	5	5	0	0	0	0
Գոռոլային որկուրասայ (Gastrite alcoolique)	0	7	7	7	0	0	0	0
Թթւումն որկորի (Gastrite hyperchlorhydriq.)	0	11	11	11	0	0	0	0
Սրկուրացալ (Göstralgi)	0	2	2	1	1	0	0	0
Սրկուրակեղ (Ulçère de l'estomac)	0	3	3	3	0	0	0	0
Խլիրղ որկորի (Cancer de l'estomac)	0	1	1	0	0	0	1	0
Սրկոր աղեասայ (Gastro-Entérite)	0	5	5	5	0	0	0	0
Սուր աղեասայ (Entérite aiguë)	0	50	50	43	0	0	0	7
Կեղծամթաղանթային աղեասայ (Entérite pseudo-membraneuse)	0	6	6	6	0	0	0	0
Տեւական աղեասայ (Entérite chronique)	0	7	7	0	1	0	6	0
Ծերութեան աղեասայ (Entérite senile)	0	5	5	0	0	0	5	0
Վարակական աղեասայ զոյոյց (Ent. infec. de l'enf.)	0	1	1	0	0	0	1	0

	Պատիւ. 1902	Ընդամուտ	Բնականապես բնիկ	Բժշկիչ	Բարակեալ	Անանկեալ	Մեռեալ	Պատիւ. 1903
Ուռական աղեասայ (Entérite tuberculeuse)	1	17	18	0	5	2	9	2
Թանջասիլ աղեասայ (Entérite dysentérique)	0	4	4	3	0	0	1	0
Թանջք (Dysenterie)	0	12	12	9	0	0	3	0
Յամբաղեասայ (Entéro-colite)	0	2	2	2	0	0	0	0
Յաւեղաղեասայ (Appendicite)	0	3	3	3	0	0	0	0
Ուռականութիւն աղեաց եւ որովայնային շճամզնի (Entéro-péritonite tuberculeuse)	0	7	7	0	3	0	4	0
Յամառ պնդութիւն (Constipation opiniatre)	0	2	2	2	0	0	0	0
Խլիրղ յամբաղեաց (Cancer du colon transvers)	0	1	1	0	1	0	0	0
Տեւասեպտութիւն (Hémorrhoides)	0	1	1	1	0	0	0	0
Աղեքսոս (Ascaride lombricoïde)	0	1	1	1	0	0	0	0
Երիզորղ (Taenia)	0	1	1	1	0	0	0	0
	2	269	271	207	12	7	31	14

Հ Ի Ւ Ա Ն Դ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

ԼԵԱՐԴԻ, ՓԱՅԾԱՂԻ ԵՒ ՈՐՈՎԱՅՆ. ՇՃԱԹԱՂԱՆԹԻ

Արեւակուսումն լեարղի (Congestion du foie)	1	0	1	1	0	0	0	0
Անբաւականութիւն լեարղի (Insuffisance hépatiq.)	0	1	1	0	0	0	1	0
Դմային դեղնութիւն (Ictère catharrhal)	0	4	4	3	1	0	0	0
Լեարղային խիթ (Colique hépatique)	0	2	2	2	0	0	0	0
Ժլուրային լեարղախ (Cirrhose hypertrophique)	0	5	5	0	3	0	1	1
Դեւասական լեարղախ (Cirrhose atrop. du foie)	0	2	2	0	0	0	2	0
Մաղճարչասայ (Cholécytite)	0	1	1	0	0	0	1	0
Խլիրղ լեարղի (Abcès multiples du foie)	0	1	1	0	0	0	1	0
Խլիրղ լեարղի (Cancer du foie)	0	1	1	0	0	0	1	0
Ճանճասեղային զերածումն փայծաղի (Splénomégalie paludique)	1	3	4	2	2	0	0	0
Ջրապարարային բուշն որովայնային շճամաղանթի (Kyste hydatique du péritoine)	0	1	1	1	0	0	0	0
Ուռականութիւն որովայնային շճամաղանթի (Péritonite tuberculeuse)	0	3	3	0	2	0	0	1
	2	24	26	9	8	0	7	2

Հ Ի Ւ Ա Ն Դ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

ՄԻՋԱՅՆ ԵՒ ԾՆՆԴԱԿԱՆ ԴՈՐԾԱՐԱՆԱՅ

Հարուածաղէրք երիկամանց (Contusion rénale)	0	1	1	0	0	1	0	0
Ապիսամիզային երիկամասայ (Néphrite albumin.)	3	36	39	20	10	2	3	4
Միզաթիւնաւորում (Uremie)	0	2	2	0	0	0	2	0
Երիկամային խիթ (Colique néphrétique)	0	2	2	2	0	0	0	0
Երիկամային մառւ (Sarcome rénal)	0	1	1	0	0	0	1	0
Աղիսոնի հիւանդութիւն (Maladie d'Addison)	0	1	1	0	1	0	0	0
Սուր փամփշասայ (Cystite aiguë)	0	2	2	1	1	0	0	0
Տեւական փամփշասայ (Cystite chronique)	1	4	5	0	2	0	2	1

	Պատկ. 1902	Ընդամանը	Բնակավայրի բնից	Բժշկ. վայր	Բարոնբնակ	Արձակվեալ	Մեռելու	Պատկ. 1903
Անսովորականություն (Incontinence d'urine)	0	5	5	2	1	0	0	3
Ջրային առատաբերություն (Polyurie nerveuse)	0	1	1	0	0	0	0	0
Սուր շագանակագեղձասայ (Prostatite aiguë)	0	1	1	1	0	0	0	0
Գերաճումն շագանակագեղձի (Hypertrophie de la prostate)	0	3	3	0	3	0	0	0
Երազախորձություն (Pollution nocturne)	0	1	1	1	0	0	0	0
Սերմնահոսություն (Spermatorrhée)	0	1	1	1	0	0	0	0
Ֆունկուլիտիսային թրիանձիլություն (Phimosis syphilitique)	0	1	1	1	0	0	0	0
Խորոպասայ (Vaginite)	0	1	1	1	0	0	0	0
	4	63	67	31	18	3	8	7
Հ Ի Ի Ա Ն Դ Ո Ի Թ Ի Ե Ք								
ՋՂԱՅԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ								
Ուղեղային արեանվրսում (Congestion cérébrale)	1	6	7	3	0	0	4	0
Ուղեղային արեանահոսություն (Hémor. cérébrale)	0	1	1	0	0	0	1	0
Ուղեղային կամուս (Apoplexie cérébrale)	2	1	3	1	0	0	2	0
Ուղեղային կակրություն (Ramollissement cérébrale)	0	16	16	0	5	3	8	0
Ուղեղային սակաւարեւնություն (Anémie cérébr.)	0	2	2	2	0	0	0	0
Ուղեղային ուր (Tumeur cérébrale)	1	0	1	0	0	0	1	0
Ուղեղային ֆունկուլիտիս (Syphilis cérébrale)	1	0	1	0	1	0	0	0
Ընդհանուր յառաջխաղաց անդամաբուժություն (Paralysie générale progressive)	2	13	15	0	4	1	9	1
Գոհողային կեղծ ընդհանուր անդամաբուժություն (Pseudo-paralysie générale alcoolique)	0	1	1	0	1	0	0	0
Կիսահարություն (Hémiplégie)	7	27	34	4	13	5	10	2
Միջնահարություն (Paraplégie)	1	6	7	0	2	1	4	0
Մասնահարություն (Monoplégie)	0	1	1	0	1	0	0	0
Խեղապասայ (Meningite)	0	1	1	1	0	0	0	0
Կիսագլխացաւ (Migraine)	0	1	1	1	0	0	0	0
Ֆունկուլիտիսային ողնուղասայ (Myélite syphilitiq.)	0	2	2	1	0	0	1	0
Տեւական ողնուղասայ (Myélite chronique)	0	2	2	0	2	0	0	0
Ընթացային անկանոնություն (Ataxie locomotrice)	2	3	5	0	2	2	1	0
Ողնուղեղային անդամաբուժություն (Paralysie spasmodique)	0	1	1	0	0	0	1	0
Անդամաբուժություն մանկանց (Paralysie infantile)	1	2	3	1	0	2	0	0
Ծուրումուն օտջ (Parésie des membres infér.)	0	1	1	0	1	0	0	0
Դեմային ջղացաւություն (Névralgie faciale)	0	1	1	1	0	0	0	0
Միջնակողային ջղացաւություն (Névr. intercost.)	0	1	1	1	0	0	0	0
Կողացաւ (Pleurodynie)	0	3	3	2	0	1	0	0
Ջիսաջղացաւ (Névralgie sciatique)	1	4	5	4	0	0	1	1
Մտաջղասայ (Névrite périphérique)	0	2	2	0	1	1	0	0
Կողորդային անդամաբուժություն (Paralysie pharyngée)	0	1	1	0	1	0	0	0
	19	99	118	22	34	16	42	4

ՋՂԱԳՐԳՌԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻԵՔ

	Պատկ. 1902	Ընդամանը	Բնակավայրի բնից	Բժշկ. վայր	Բարոնբնակ	Արձակվեալ	Մեռելու	Պատկ. 1903
Լուսնոսություն (Epilepsie)	1	11	12	0	2	1	1	0
Հիստերի (Hystérie)	3	18	21	11	8	1	0	1
Հիստերալուսնոսություն (Hystéro-épilepsie)	0	1	1	0	0	1	0	0
Լուսնոսական ուշաթափություն (Absence épilept.)	0	1	1	0	1	0	0	0
Ջղագարություն (Neurasthénie)	0	9	9	3	2	4	0	0
Ջղայնություն (Nevrosisme)	0	9	9	6	2	1	0	0
Մեղմալուրություն (Mélancolie)	0	4	4	0	0	2	1	1
Աւշուություն (Idiotie)	0	1	1	0	0	1	0	0
Մորֆինամոլություն (Morphinomane)	0	1	1	1	0	0	0	0
Խօլություն (Démence)	0	2	2	0	0	2	0	0
Անդամաբուժական խօլություն (Dém. paralytique)	2	4	6	0	1	5	0	0
Ծեւնալուրություն խօլություն (Démence paralytique)	0	1	1	0	0	0	1	0
Կանուսային խօլություն (Démence apoplectiq.)	0	3	3	0	1	0	2	0
Կանուսային ախտաբուժություն (Cachexie apop.)	0	1	1	0	0	0	1	0
Ջղային ախտաբուժություն (Cachexie nerveuse)	0	1	1	0	0	0	1	0
Ցնցական անդամաբուժություն (Paralysie agitante)	1	3	4	0	1	3	0	0
Ջղագրգռական անդամաբուժություն (Trophonévrose)	0	6	6	5	0	0	0	1
	7	76	83	26	25	22	7	3

ՀԻՒԱՆԴՈՒԹԻԵՔ ԾԱՐԺԻՋ ԿՈՐԾԱՐԱՆԱՅ

	Պատկ. 1902	Ընդամանը	Բնակավայրի բնից	Բժշկ. վայր	Բարոնբնակ	Արձակվեալ	Մեռելու	Պատկ. 1903
Սուր յօղացաւ (Rhumatisme aiguë)	0	47	47	44	1	0	0	2
Տեւական յօղացաւ (Rhumatisme chronique)	5	2	7	0	5	0	0	2
Կարկանդակ պարանոցի (Torticolis)	0	2	2	1	0	0	0	1
Ջերմաբորան յօղացաւ (Rhumat blennorrhagiq.)	0	1	1	1	0	0	0	0
Յառաջխաղաց ծիրումն մկանանց (Atrophie musculaire progressive)	0	1	1	0	0	1	0	0
Միջացաւ (Lumbago)	0	4	4	4	0	0	0	0
Յօղաբարձություն ծունցի (Hydarthrose du genou)	0	1	1	1	0	0	0	0
Պոսի իւանություն (Mal de Pott)	0	1	1	0	0	1	0	0
	5	59	64	51	6	2	0	5

Ը Ն Դ Ղ Ա Ն Ո Ւ Ր Հ Ի Ւ Ա Ն Դ Ո Ւ Թ Ի Ե Ք

	Պատկ. 1902	Ընդամանը	Բնակավայրի բնից	Բժշկ. վայր	Բարոնբնակ	Արձակվեալ	Մեռելու	Պատկ. 1903
Հարսանիք (Rougeole)	0	52	52	51	0	0	0	1
Համադուր (Grippe)	0	7	7	7	0	0	0	0
Ժանսասենդակեղայ ջերմ (Fièvre typhoïde)	1	12	13	12	0	0	0	1
Ընդհասայերմ (Fièvre intermittente)	0	10	10	9	0	1	0	0
Թազնայերմ (Fièvre larvée)	0	1	1	1	0	0	0	0
Սակաւարեւնություն (Anémie)	1	6	7	5	1	0	0	1
Դարուկ եւ Սակաւարեւնություն (Chloro-anémie)	1	0	1	1	0	0	0	0
Ժանսասենդակային ախտաբուժություն (Cachexie typh.)	0	1	1	1	0	0	0	0
	3	89	92	87	1	1	0	3

	Պատր. 1901	Ընդունում	Բովանդակություն	Բժշկել	Բարւոյնեալ	Արձակեալ	Մեռել	Պատր. 1903
ԱՓՐՈՒԻՏԵԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ								
Ջերմամիզումբիւն (Blennorrhagie)	0	20	20	15	1	2	0	2
Տեւական ջերմամիզումբիւն (Blenorrhée)	0	2	2	1	1	0	0	0
Ջերմամիզային ամորձասալ (Orchite blennorrhag)	1	8	9	7	0	2	0	0
Ջերմամիզային կորիզ (Rubon blennorrhagique)	0	2	2	2	0	0	0	0
Թրիպոստիտիս (Balano-postite)	0	2	2	2	0	0	0	0
Մակամորձասալ (Epididymite)	0	1	1	0	1	0	0	0
Սողնային ծննդական գործարանաց (Herpès génital)	0	2	2	2	0	0	0	0
Կակուղ չարակեղ վարոցի (Chancre mou de la verge)	1	5	6	5	0	1	0	0
Կակուղ չարակեղային կորիզ (Bubon chancrel.)	0	2	2	2	0	0	0	0
Մաքոյս վարոցի (Végétation de la verge)	0	1	1	1	0	0	0	0
Ուսիչ չարակեղ (Chancre phagédénique)	0	2	2	2	0	0	0	0
Կարծր չարակեղ վարոցի (Chancre induré de la verge)	2	2	4	3	1	0	0	0
Ֆռանկային երկրորդ ասիճանի (Syphilis second.)	0	14	14	13	1	0	0	0
Շակակերպ մորձային ախտահիշք Ֆռանկային (Syphilides papulo-érosives)	0	3	3	2	0	0	0	1
Ֆռանկային սպիտակեղ (Ulcère syphilitique)	0	3	3	3	0	0	0	0
Ֆռանկային երրորդ ասիճանի (Syphilis tertiaire)	1	19	20	12	5	1	1	1
Ֆռանկային ուղղակեղ (Syphilis réctale)	0	1	1	0	1	0	0	0
Ֆռանկային մաքոյս սրբանի (Végétation anale syphilitique)	0	1	1	1	0	0	0	0
Ֆռանկային (Gomme syphilitique)	0	3	3	3	0	0	0	0
Ժառանգական ֆռանկային (Syphilis héréditaire)	0	3	3	0	3	0	0	0
	5	96	101	76	14	6	1	4
ՄՈՐԹԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ								
Ուրթին (Impétigo)	0	5	5	4	1	0	0	0
Հրատոյր պայար (Ecthyma)	0	1	1	1	0	0	0	0
Ընդհանրացեալ մկննուկիւն (Furuncul. général.)	0	4	4	4	0	0	0	0
Հանգուցաւոր էրիթէմ (Erythème noueux)	0	1	1	1	0	0	0	0
Էրզէմա (Eczéma)	2	20	22	17	2	0	0	3
Էրզէմա դեղորէից հետեւանք (Eczéma médicam.)	0	3	3	3	0	0	0	0
Քոս (Gale)	3	38	41	39	0	0	0	2
Գոնջ (Favus)	2	3	5	5	0	0	0	0
Տապաս դիմաց (Erysipèle de la face)	0	2	2	2	0	0	0	0
Թզակ (Sycosis)	0	1	1	0	1	0	0	0
Արհեսային մորձասալ (Dermite professionnelle)	0	1	1	1	0	0	0	0
Ոչրտիսիւն (Phtiriasis)	1	2	3	2	1	0	0	0
Փսոր (Psoriasis)	0	1	1	1	0	0	0	0
Մորձարոս (Lichen)	0	1	1	1	0	0	0	0
Պելագրա (Pellagre)	0	1	1	1	0	0	0	0
Մորձային ուռականուկիւն (Tuberculose cutanée)	0	1	1	1	0	0	1	0
Բոր (Lèpre)	0	1	1	0	0	1	0	0
	8	86	94	82	5	1	1	5

1002
8698
37498

	Պատր. 1902	Ընդունում	Բովանդակություն	Բժշկել	Բարւոյնեալ	Արձակեալ	Մեռել	Պատր. 1903
ՉԱՆՁԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ								
Կոստոս (Courbature)	0	14	14	13	0	0	0	1
Ծերուկեան թլակումբիւն (Faiblesse sénile)	2	21	23	17	4	0	1	1
Ծերուկիւն (Sénilité)	1	19	20	0	5	3	11	1
Բնախտական թշուառութիւն (Misère physiolog.)	0	1	1	1	0	0	0	0
Գոնդային սուր թունաւորում (Alcoolisme aiguë)	0	2	2	2	0	0	0	0
Գոնդամորթիւն (Alcoolisme chronique)	0	2	2	0	1	1	0	0
Արեւահարումիւն (Insolation)	0	4	4	4	0	0	0	0
Յրէխած (Engelure)	0	1	1	1	0	0	0	0
Յոդազաւային ոսկրագոյնաց (Périostite rhumatismale)	0	1	1	1	0	0	0	0
Հարուածալէրք (Plaie contuse)	0	3	3	3	0	0	0	0
Ոսկրամուռ ազրոսկեր (Osteo-sarcome du fémur)	0	1	1	0	0	1	0	0
Հարուածացաւ ազրոսկ (Contusion de la hanche)	0	1	1	1	0	0	0	0
Միջին ունկնասալ (Otite moyenne)	0	1	1	1	0	0	0	0
Կողակրասալ (Ostéite costale)	0	1	1	1	0	0	0	0
Ժահնահարումիւն (Bromisme)	1	1	2	2	0	0	0	0
Կեղծ հիւանդ (Simulation)	0	5	5	0	0	5	0	0
Բննելի հիւանդ (Malades en observation)	0	3	3	0	0	3	0	0
	4	81	85	47	10	13	12	3
Հոգեւարք	0	13	13	0	0	0	13	0
Յուցակի իւրաքանչիւր հիւանդութեանց խումբի տւած գումարներն իւրտու վրայ բարդելով կ'ունենամք								
	94	1391	1485	747	326	93	232	87
Այս ցուցակէն կը տեսնուի թէ 1902 ի մէջ զարմանեալ 1485 հիւանդաց 747ը կատարելապէս բժշկուած են, 326 բարւոյնաց, 93ը առանց կարեւոր փոփոխութեան արձակուած և 232ը մեռած են (այս մեռելներու 13ը հոգեվարք հասած են Հիւանդանոցս), և 1903 Յունուար 1 ին 87 հիւանդներ պատրաստ և ի զարմանի էին մեր սրահաց մէջ :								
Յանախուրիւն հիւանդութեանց. — վերոգրեալ ցանկը ըստ հիւանդութեանց դասակարգին համապատասխան կ'ունենանք յետագայ ցուցակը :								



Շնչառեւտրական գործարանի հիւանդութիւնք	339
Արեան շրջանի »	132
Մարտողական գործարանի »	271
Լեարդի, փայծաղի և այլ »	26
Միզային և ծննդական գործարանաց »	67
Ջղային դրութեան »	118
Ջղագրգռական »	83
Շարժիչ գործարանաց »	64
Ընդհանուր »	92
Ափրոզիտեան »	101
Մորթային »	94
Չանաղան »	85
Գումար	1472

Այս ցուցակէն կը տեսնուի թէ՛ մեր բաժնոյն մէջ դարմանեալ հիւանդութեանց աւագ մեծամասնութիւնը շնչառեւտրական և մարտողական գործարանաց կը վերաբերին, ապա կուգան Ջղային դրութեան, արեան շրջանի և շարժիչ գործարանաց հիւանդութիւնք։ Այս չորս կարգի հիւանդութիւնք մեր հիւանդաց թուոյն ամբողջութեան կէսէն շատ աւելին կը ներկայացնեն, ինչպէս և դիտել տուած ենք ուրիշ տարիներ։

Հիւանդութիւնները մասնաւորապէս առնելով իրենց յաճախութեան կարգաւ, ըստ յետագային կը դասակարգուին . 1. Թոքային ուռականութիւն (176), 2. Հարսանիթ (52), 3. Սուր թոքայնոցաւտապ (50), 4. Սուր աղետապ (50), 5. Սրտամկնատապ (49), 6. Սուր յօդացաւ (47), 7. Կրճիմն որկորի (45), 8. Քոս (41), 9. Սպիտամզային երիկամատապ (39), 10. Անբաւականութիւն սրտի խոյրածե դռնակի (36), 11. Կիսահարութիւն (34), 12. Սուր որկորատապ (28), 13. Սուր թոքատապ (23), 14. Տեւական թոքատապ (21)։ Այս 14 հիւանդութեանց գումարն ամբողջ դարմանելոց (1485) շուրջ կէսը (691) կը ներկայացնէ։

Բառ մը այս հիւանդութեանց մի քանիներու մասին։

Այս ցուցակի գլուխը կը տեսնենք Թոքային ուռականութիւնը, նոյն կը հաստատուի և գրեթէ ամէն հիւանդանոցաց մէջ։ Մարդկութեան այս մեծ թշնամին որ ըստ վիճակագրաց Եւրոպիոյ մահերու ¹/₆ ն կը ներկայացնէ, սկսած է և յԱրեւելս մեծ ջարդեր գործել, և որոյ զոհերն ընդհանուր առմամբ աղքատութեան հետ

ուղղակի համեմատական են, և որոնց թուոյն այս վերջին տարիներս ի մեզ աճումն մեր նիւթական վիճակի անկման և աղքատութեան աճման հետեւանքն է։

Հարսանիթի կրկին Որբանոցացս մէջ համաճարակի մը հետեւանքն է այս ստուար թիւը։ Ունեցանք տասնեակ մը խիստ ծանր պարագաներ, սակայն ո և է աղետալի հետեւանք չ'ունեցան։

Այս ցուցակի մէջ Քոսի ենթարկելոց ստուար թիւը բացառութիւն մ'է, և հետեւանք համայն մայրաքաղաքիս մէջ սիւռեալ համաճարակի մը . մայրաքաղաքիս բոլոր հիւանդանոցաց մէջ դիտուեցաւ այս տարօրինակ համաճարակը և որ Կեդրոնական Ասիայէն եկող մոնկոլ բաղմաթիւ ճանապարհորդաց կը վերագրուի։ Շնորհիւ գիտական արդի միջոցներու այս հիւանդութիւնը դիւրաւ կը բժշկուի։

Դասակարգուելուն հիւանդութեանց ըստ իրենց տեսականութեան տեսակէտով երեք դասի (սուր, տեւական և հոգեւարք) բաժնելով կուտենանք .

Սուր հիւանդութիւնք	787
Երկարատե հիւանդութիւնք	598
Հոգեւարք	13

	1398

Հիւանդանոցիս ազգային պատուարան մը և անկեւանոց մը միանգամայն ըլլալը կը բացատրէ երկարատե հիւանդութեանց ենթարկելոց բազմութիւնը։

Տեւողութիւն հիւանդութեանց . — 1902 ի տարեշրջանին մեր սրահաց մէջ դարմանուած հիւանդաց 1398ը մեկնած են իբր բժշկեալ, բարուքեալ, արձակեալ կամ մեռեալ։ Արդ, ասոնց հիւանդանոցս անցուցած օրերուն գումարն է 41,497 օր, որով իւրաքանչիւր հիւանդ միջին հաշուով 29,6 օր մնացած է հիւանդանոցս։ Անցեալ տարուան միջինն էր 30,72, նախորդ տարուանը 33,5, իսկ 1899 ինը 31 օր, ուստի և միջին հաշուով հիւանդները շուրջ 30 օր կը մնան հիւանդանոցս։ Արդարեւ այս տեւողութիւնը եր-

կար է և որ հիւանդարանիս՝ պատասպարան և անկեղանոց մը միանգամայն ըլլալուն հետեւանքն է : Գաղափար մը տալու համար թէ ոմանք մինչև որչափ երկար ժամանակ կը մնան մեր սրահաց մէջ, նախորդ տարիներու նման յետագայ ցուցակաւ կը պատկերեմք 100 օրէ աւելի մնացող հիւանդներու ցանկը .

	Գումար	Միջին
31 հոգի 100 — 150 օր	= 3799 օր	122 օր
17 » 150 — 200 »	= 2873 »	169 »
6 » 200 — 250 »	= 1370 »	228 »
3 » 250 — 300 »	= 816 »	272 »
2 » 300 — 350 »	= 658 »	329 »
2 » 350 — 400 »	= 722 »	361 »
61 »	10,238	167,8 »

Այս 61 անձեր միայն 10,238 օր մնացած են և կամ իրարու վրայ 167,8 օր որ մեծապէս կը բարձրացնէ ընդհանուր հիւանդաց մեր սրահաց մէջ մնացած օրերու միջինը : Արդ 1398 հիւանդաց թիւէն հանելով այս 61 երկարամնացները (1398 — 61 = 1337) և ընդհանուր հիւանդաց մնացած օրերու գումարէն (41,497) այդ 61 անձանց հիւանդանոց մնացած օրերու գումարը (10,238) կուտենանք 1337 անձերու համար (41,498 — 10,238) 31,259 օր , որ մեզ կուտայ $\frac{31,259}{1337} = 23,38$ օրուան միջին մը որ դո՛հացուցիչ կրնայ համարուիլ : Անցեալ տարուան նմանօրինակ հաշիւներու միջինն էր 24,47 , նախորդ ատուանը 25,18 , իսկ 1899ին 23,5 օր :

ԳԼՈՒԽ Դ.

ԱՐԴԻՒՆՔ ՀԻՒՍՆՊԱՆՈՑԻ

Ընդհանուր ցուցակ . — 1902 ի տարեշրջանին մեր սրահաց հիւանդաց ելեւմուտքն կը ներկայացնէ յետագայ ցուցակը :

ՊԱՅՐԱՍ 1902 ՅՈՒՆՈՒԱՐ 1

Այր 69 — Կին 25 — Գումար 94

ՄՈՒՏՔ

Դրուէն	Այր	Կին	Գումար
Որբանոցէն	800	213	1013
Պաշտօնեայ	85	74	159
Ծերանոցէն	21	7	28
Յիւսարանոցէն	51	28	79
Ուսանողներէն	75	34	109
	3	—	3
			1485

ՍԼՔ

Բժշկեալ	Այր	Կին	Գումար
Բարւոքեալ	571	176	747
Արձակեալ	243	83	326
Մեռեալ	62	31	93
	158	74	232
	1034	364	1398
Պատրաստ	Այր 68	Կին 19	Գումար 87
			1485

Այս ցուցակէն կը տեղեկանանք թէ՛ խնամեալ 1485 հիւանդաց 747 ը կատարեալպէս առողջացած են , 326 ը բարւոքեալ , 93 ը առանց մեծ բարեփոխութիւն մը կրելու թողուցած են հիւանդարանս , 232 ը մեռած , իսկ 87 ը դեռ ի դարմանի են տարույս վերջը :

Ո՞ր ամսոց մեզ աւելի մահ կը պատահի . — Նշանակենք ի ստորեւ իւրաքանչիւր ամսոց մահերու թիւերը .

	Փոխադրեալ	Փոխադրեալ
Յունուար	20	Մայիս 26
Փետրվար	20	Յունիս 28
Մարտ	24	Յուլիս 18
Ապրիլ	25	Օգոստոս 23
	89	184
		Գումար 232

Այս թիւերը չեն թույլատրեր ու եւ է եզրակացութեան յանդե-
լու . որպէս կ'ըսէի՝ տասնեակ մը տարիներու միջինները գոնէ
հարկ են առ այս :

Մեռելոց սեռը . — Վերոգրեալ ընդհանուր ցուցակէն կը
տեսնուի թէ՛ 232 մահերու 158ը այր են և 74ը կին :

Սակայն այդ 232 ի 13ը հոգեւարք հասած են Հիւանդանոցս
(8 այր 5 կին), ուստի և բուն մեր դարմանածներէ 210 մահ ու-
նեցած ենք որոնցմէ 150ը այր 69ը կինս Արդ մեր դարմանած 1385
հիւանդաց 1032ը այր և 353ը կին են . ուստի

1032 այրէն 150 մահ = 0/10 14,53
353 կինէն 69 » = 0/10 19,54

Միջին հաշուով այրերը 0/10 14,53 մահ տուած են և կիները
19,54 : Կանանց մահերու առաւելութիւնը կը բացատրուի իգական
սեռէ գրեթէ մեծաւ մասամբ պառաւներու հիւանդանոցս դիմելը
որպէս դիտել տուինք արդէն :

Մեռելոց տարիքը . — Մեռեալները ըստ իրենց հասակի դա-
սակարգելով կունենանք .

1—10 տարեկան	3	Փոխադրեալ	117
11—20 »	14	51—60 տարեկան	44
21—30 »	27	61—70 »	45
31—40 »	32	71—80 »	11
41—50 »	41	81—100 »	2
Փոխադրելի	117		219

Այս ցուցակը ինքնին ու եւ է որոշ եզրակացութիւն չտար , ա-
ւանց բազմատեղու իւրաքանչիւր հասակէ մահերը այդ տարիքով
հիւանդներու թուոյն հետ՝ ըստ յետագայ ցուցակին .

Տարիք	Թիւ հիւանդաց	Մահ, Համեմատութիւն
1—10	108	3 = 2,77
11—20	228	14 = 6,14
21—30	222	27 = 12,16
31—40	174	32 = 18,39
41—50	232	41 = 17,67
51—60	190	44 = 23,15
61—70	176	45 = 25,25
71—80	55	11 = 20
81—100	13	2 = 15,38

Այս բազմատեղան ցուցակը կը ցուցնէ թէ՛ մահերը գրեթէ
մարդոց հասակին հետ կ'աճին , ինչպէս բնական ալ է , միայն ծե-
րունեաց այս ցուցակին մէջ համեմատական նուազումն բացառութիւն
մ'է այս տարուան համար :

Մեռեալք բս հիւանդութեանց . — Հիւանդութեանց իւրա-
քանչիւր դասակարգին տուած մեռեալները յետագայ ցուցակով
կը պատկերացնենք :

	Մահ
Շնչառեւարական դործարանի հիւանդութիւնք (312)	— 89
Արեան չրջանի » (122)	— 21
Մարսողական » (257)	— 31
Լիարդի , փայծաղի , որովայնի , ևլն . » (24)	— 7
Միզային և ծննդական դործարանաց » (60)	— 8
Ջղային դրութեան » (114)	— 42
Ջղագրգռական » (80)	— 7
Շարժիչ դործարանաց » (59)	— —
Ընդհանուր » (89)	— —
Ափրողիտեան » (97)	— 1
Մորթային » (81)	— 1
Զանազան » (82)	— 12

Այս ցուցակէն ու եւ է եզրակացութիւն հանել կարելի չ'է .
ուստի մասնացոյց ընենք միայն աւելի մահառիթ հիւանդութիւն-
ները ու դասաւորենք զայնս իրենց վտանգաւորութեան կարգաւ :
Աստ պիտի նշանակենք միայն այն հիւանդութիւնները որոնցմէ
5 է աւելի ունեցած ենք :

Ծերութեան աղետապ	5 — 5 = 0/100
Տեւական »	7 — 6 = 0/85,71
Ընդհանուր անդամալուծութիւն	15 — 9 = 0/60
Ուռական, աղեաց և որովայն. չճամղնի	7 — 4 = 0/57,14
Ուղեղային արեանակուտում	7 — 4 = 0/57,14
Միջնահարութիւն	7 — 4 = 0/57,14
Ուռական աղետապ	18 — 9 = 0/50
Ուղեղային կակղութիւն	16 — 8 = 0/50
Թոքային ուռականութիւն	176 — 73 = 0/41,47
Ծերութիւն	20 — 11 = 0/41,41
Տեւական փամփշտապ	5 — 2 = 0/40
Կիսահարութիւն	34 — 10 = 0/29,40

Թանձք	12— 3=0/0	25
Թոքատապ	23— 5=0/0	21,73
Ծիւրային լեարդախտ	5— 1=0/0	20
Ընթացային անկանոնութիւն	5— 1=0/0	20
Անբաւականութիւն սրտի խոյր. դռնակի	36— 7=0/0	19,22
Սրտամկնատապ	49— 8=0/0	16,32
Անբ. սրտի խոյր. անձից և անձկ. մայր չնչ.	11— 1=0/0	9,09
Լուսնոտութիւն	12— 1=0/0	8,33
Սպիտամզային երիկամատապ	39— 3=0/0	7,43
Կարծրութիւն շնչերակաց	14— 1=0/0	7,14
Ջրգողութիւն թոքամզնի	20— 1=0/0	5
Փրանկախտ Գ. աստիճանի	20— 1=0/0	5
Տեւական թոքացնցղատապ	21— 1=0/0	4,76

Մեռեալները եթէ կարգադասենք ըստ իրենց հիւանդութեանց տեւողութեան կունենանք .

	Թիւ հիւանդաց	Մահ	Համեմատութիւն
Սուր հիւանդութիւնք	784	— 24	= 0/0 3,04
Երկարատե հիւանդութիւնք	598	— 195	= 0/0 32,58
Հոգեւարք	13	— 13	= 0/100

Այս ցուցակէն կը տեսնուի թէ սուր հիւանդութիւններէ քիչեր (0/0 3,04) միայն կը մեռնին, և մահացելոց ստուար մեծամասնութիւնը երկարատե հիւանդութեանց ենթակեալներն են :

Ո՞ր հիւանդներն աւելի մահ կուտան . — Հոգեվարքներէն ետք որք առանց ծախսի թաղուելու համար Հիւանդանոց կը բերուին , կուգան հաստատութեանս Ծերանոցի և Յիմարանոցի պատաստարեալները : 1902 տարուոյ չրջանին մէջ ունեցանք 13 հոգեվարքներէ զատ 23 ծերանոցէն և 45 յիմարանոցէն մահեր :

Մահերը ի՞նչպէս կը բաժնուին . — Մեր սրահաց մէջ տեղի ունեցած 219 մահերէն 148 ը դրսէն եկած են , 23 ը Ծերանոցէն , 45 ը Յիմարանոցէն , 2 ը Որբանոցէն և 1 ը պաշտօնեայ , զորս յետագայ ցուցակաւ կը ներկայացնենք .

Դրսէն	Այր	101	—	Կին	47	—	Գումար	148
Պաշտօնէից	»	1	—	»	—	—	»	1
Ծերանոցէն	»	16	—	»	7	—	»	23
Որբանոցէն	»	2	—	»	—	—	»	2
Յիմարանոցէն	»	30	—	»	15	—	»	45
		150			69			219

Մեռեալներու համեմատութիւնը . — Մեր սրահաց մէջ հոգեւարքներէն զատ դարմանեալ 1385 հիւանդաց վրայ 219 մահ ունեցած ենք , ըսել է 0/0 15,81 :

Իսկ եթէ հիւանդանոցիս վիրաբուժական բաժնոյն մէջ դարմանեալ 570 հիւանդները իրենց 33 մահերով ևս ի նկատի առնենք, ամբողջ հիւանդաց թիւը կ'ըլլայ (1384 + 570 =) 1955 : Համեմատութեան դնելով այս թիւը մահերու գումարին հետ (219 + 33 =) 252 , կունենանք $\frac{252}{1955} = 15,89$ առ հարիւր մահականութիւն մը : Իսկ եթէ 13 հոգեւարքներն ալ առնենք կունենանք $\frac{252+13}{1955+13} = \frac{265}{1968} = 13,46$ առ հարիւր համեմատութիւն մը : Բաղդատութեան դնելով այս վերջին մէկ քանի տարիներու միջինները՝

1898 ին	0/0 19,37	1901 ին	0/0 15,12
1899 ին	0/0 16,97	1902 ին	0/0 13,46
1900 ին	0/0 15,10		

Տեղեկազիրս կնքելուս պարտ կը համարիմ իմ մասնաւոր գոհունակութիւնս յայտնել Պատ. պաշտօնակցիս Տօք. Զարդարեան էֆ. ի իր համերաշխ դործունէութեան և աջակցութեան համար և շնորհակալութիւնս Հաստատութեանս օժանդակ բժշկաց և նամանաւոր օգնականիս Տօք. Գաղաղեան էֆ. ի իր անձնուէր գործակցութեան , և որոյ կը պարտինք նաեւ տեղեկագրոյս պատրաստութեան մէջ մեծ բաժին մը :

Պարտ համարիմ և հրապարակաւ յայտնել Ձեզ , Պատուարժան Տեա՛րք , ամենաջերմ շնորհակալութիւններս վասն այն վստահութեան զոր կը շարունակէք ունենալ իմ մասին ու ջանադիր կ'ըլլաք դիւրացնել իմ գործունէութիւնն :

Ընդունեցէք ինդրեմ , Պատ. Տեարք , և այս առթիւ ամենախորին յարգանացս հաւատարիմ :

ՏԵՍՈՒՉ ՀԻՒԱՆԴԱՐԱՆԻ

Եւ

Բժշկապետ ներքին հիւանդութեանց բաժնոյն

ՏՕՔԹ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ


17/30 Յունուար 1903

Եւտի-Գուլէ



Վ Ի Ր Ա Բ ՈՒ Ժ Ա Կ Ա Ն Բ Ա Ժ Ի Ն

1902 Յունուար 1 և մինչև 1903 Յունուար 1



Վստևաշոբ Ասենասպետ ԷՄԵԼԻՏԻ

և

Պատուարժան Տեառք Անդամք Մեղուաշան Հոգաբարձութեան

Եկե՛ք Գուշի Հայոց Հիւանդանոցի

Ի Մեծ Նոր Խան

Ազնուաշուք Տեա՛րք ,

1902 Յունուար 1 է մինչև 1903 Յունուար 1 վերաբուժական բաժնին մէջ ընդունած ենք ընդամենը 585 հիւանդ՝ որոնք վրայ նախորդ տարիէն մնացածներն՝ այսինքն 46 թիւն ևս աւելցնելով կունենանք 631 ամբողջական գումարը : Այս թիւէն 61 հիւանդներ տակաւին դարմանումի ներքև են որոնք 1903ի հաշուոյն մէջ պիտի անցուին . հետեւաբար այս վերջինները հանելով ընդհանուր գումարէն , կը մնան մի միայն 570 հիւանդք , որոնց վրայ պիտի ըլլան մեր տուած ծանօթութիւնները :

Նախորդ տարիներու տեղեկագրաց ծրագրոյն հետեւելով նրկատի կառնեմք նախ հիւանդաց տարիքն ու սեռը :

Արդ՝ 585 հիւանդներէն 352 ը այր , 133 ը կին , 60 ը աղայ և 25 ը աղջիկ են . իսկ անոնց տարիքին զանազանութիւնը յետագայ ցուցակաւ կը ներկայացնենք :

1—10 տարեկան	= 42	Փոխադրեալ	487
11—20 »	= 110	51—60 տարեկան	= 50
21—30 »	= 154	61—70 »	= 27
31—40 »	= 89	71—80 »	= 5
41—50 »	= 92	81—90 »	= 1
Փոխադրելի		487	Գումար
			570

Այս 570 հիւանդաց մեծագոյն մասը գործողութեան ենթարկուած , մէկ մասն առանց գործողութեան՝ վերաբուժական այլ և այլ միջոցներով դարմանուած և ուրիշներ ալ իրենց հիւանդութեան անբուժելիութիւնն նկատի առնելով հեռացած են հիւանդանոցէս :

Ուստի 570 հիւանդներէն իրապէս 340 ին վրայ աւելի կամ նուազ կարեւոր գործողութիւններ կատարած ենք , իսկ դարմանեալ ամբողջ հիւանդաց մասին ձեռք բերուած արդիւնքն յետագայ ցուցակաւ կը ներկայացնենք .

Գործողութեամբ բժշկեալք	287
Առանց գործողութեան բժշկեալք	100
Գործողութեամբ բարւոքեալք	28
Առանց գործողութեան բարւոքեալք	36
Գործողութեամբ ոչ բժշկեալք	8
Առանց գործողութեան արձակեալք	79
» » մեռեալք	15
Գործողութեան ենթարկմամբ մեռեալք	18
Գումար	
	570

Այս ցուցակէն դիւրին է եզրակացնել թէ՛ մահերու համեմատութիւնը շուրջ 5,78% է , իսկ գործողութեան ենթարկմամբ մեռեալներու համեմատութիւնն է 5,29% : Ընդհանուր առմամբ մեր դարմանած 570 հիւանդներէն միայն 33 ը մեռած են :

Ինչպէս արդէն ըսած էինք կատարուած 340 գործողութիւններէն մի քանի կարեւորագոյններուն մասին կարծէ որ համառօտիւ տեղեկութիւններ տանք :

1. Աղեթափութեան (Hernie) գործողութիւնը ընդհանրապէս մեր ամենէն յաճախակի կատարած գործողութիւններէն է . այս տարի 52 անձերու վրայ ի գործ դրինք վերջնականապէս բուժելով զանոնք . հիւանդաց տարիքն էր 2—70 , երբեմն կրկին , այսինքն աջակողմեան և ձախակողմեան աղեթափութիւն ունեցող հիւանդներն մէկ անգամէն գործողութեան ենթարկեցինք . սոյն գործողութիւնը կատարելու համար Լիւգաս-Շամբրիօնիէուի եղանակը ընտրած ենք , անոր վրայ աւելցնելով մի քանի բարեփոխութիւններ , իսկ տեւողութիւնն է ըստ պարագայից (12—30) վայրկեան :

2. Երեանամեայ կնոջ մը վրայ միայն երանքային աղեթափութեան (Hernie crurale) արմատական դարմանը կատարեցինք :

3. Պորտի աղեթափութիւն (Hernie ombilicale) ունեցող երկու կնոջ վրայ արմատական դարմանում կատարեցինք առանց դժուարութեան և ամենայն յաջողութեամբ . սոյն հիւանդութիւնն արդիւնքն էր եղած ծննդաբերութեան դժուարութեանց . գործողութեան եղանակն է պորտն իր ներքեւի մասերով մինչև որովայնային շճաթաղանթը հանել ձուածկ ճեղքով մը :

Եզրակացութիւն . — Ամէն տեսակ աղեթափութիւն , ըլլայ ցայլական , ըլլայ երանքային կամ պորտային պէտք է գործողութեան ենթարկել առանց յետաձգելու , որովհետև աղեթափութիւն մը որչափ նոր ըլլայ՝ վիրաբոյժին աշխատութիւնը այնչափ դիւրին յաջողութիւնն ալ նոյնքան ապահով կ'ըլլայ : Ո և է աղեթափութիւն երբ խեղդեալ (étranglé) վիճակն ունենայ անմիջապէս պէտք է գործողութեան ենթարկել : Դժբազդարար խեղդեալ աղեթափութիւն ունեցող հիւանդներ երբեմն գործողութիւնն ուշացնելով և կամ աղիքը որովայնին մէջ զրկելու զուր ջանքերով պատճառ կ'ըլլան իրենց ազեաց փատելուն և պայթելուն :

4. Լեարդի և փայծաղի ջրապալար (Kyste hydatique du foie et de la rate) . — Այս տեսակ ջրապալարներու գործողութիւնը դիւրին կ'ըլլայ՝ երբ շճաթաղանթին հետ կցուած ըլլան , հակառակ պարագային՝ նախ և առաջ ջրապալարը և շճաթաղանթը պէտք է որովայնի վէրքի եզերաց կարել և յետոյ ջրապալարը բանալ որպէսզի այս վերջնոյն պարունակութիւնը որովայնին մէջ չխուժէ : Մին լեարդի և միւսն փայծաղի ջրապալար ունեցող երկու հիւանդաց վրայ վերոյիշեալ կերպով կատարեցինք սոյն գործողութիւնը :

5. Ծիւրական լեարդախտէ (Cirrhose atrophique du foie) տառապող հիւանդի մը վրայ Թալմաի գործողութիւնը կատարեցինք : Այս տեսակ հիւանդներ մինչև հիմա թէև դեղորէից միջոցաւ դարմանել կարելի էր , բայց անոնց անբաւականութիւնն նկատի առնելով՝ յաւելադետապի , շճաթաղանթի ուռականութեան , սորի անձկութեան (stenose pylorique) և ուրիշ հիւանդութեանց պէս ծիւրական լեարդախտն ալ վիրաբուժական գործողութեամբ դարմանելու դազափարն մօտ ատեններս երեւան եկաւ . ուստի այս մասին Թալմաի եղանակն ընդունուած է որ կը կայանայ լեարդի արեան չրջանը ճարպի երակաց միջոցաւ շեղեցնելու մէջ . յիշեալ գործողութեան արդեանց մասին վճռական դազափար մը յայտնել դեռ կարելի չէ , վասնզի խիստ քիչ անգամ կատարուած է , Պօլսոյ մէջ մէկ անգամ թերեւս և մեր Հիւանդանոցի մէջ ալ առաջին անգամ :

6. Յաւելադետապ (Appendicite) ունեցող հինգ հիւանդներ ընդունեցինք , որոնց երկուքը գործողութիւն չուղեցին , երկուքը գործողութեամբ կատարելապէս բուժուեցան , իսկ հինգերորդն՝ ախտին յառաջացմանը և ալեաց կցմանց պատճառաւ մեռաւ : Հին և կրկնող յաւելադետապի գործողութիւնն դժուար և երբեմն ալ վտանգաւոր է . խորհուրդ կուտամ այս տեսակ հիւանդներու որ ախտին սուր աստիճանին անցնելէն մէկ ամիս վերջ գործողութեան ենթարկուին . այլ ևս ցաւալի է հետեւիլ նախկին պահպանողական դրութեան՝ քանի որ տրամադրելի միջոցներով գործողութիւնը դիւրին է և մահուան վտանգ չկայ , մանաւանդ երբ յարմար ժամանակին ըլլայ :

7. Որովայնային շճաթաղանթի ուռականութեան (Péritonite tuberculeuse) մէջ գործողութեամբ ձեռք բերուած արդիւնքներն խիստ քաջալերական են : Շճաթաղանթի լուացումն և մաքրութիւնը հազարին 40 կրամ սօրական թթու և 7 կրամ պարզ աղ պարունակող ջրով կ'ըլլան : Գործողութեան եղանակին մէջ մասնանիշ ընելու նորութիւն մը չկայ , միայն կարեւոր է գիտնալ թէ գործողութենէ վերջ ինչ կ'ըլլան ուռականութիւնք . արդ՝ վերջերս առիթն ունեցայ մեռած աղջկան մը՝ որ շճաթաղանթի ուռականութեան համար 5 տարի առաջ որովայնահարութեան ենթարկուած էր՝ դիազննութեան ատեն դիտել թէ ուռականութիւնք զգալապէս նուազած և բարուքած էին , ուստի կրնանք հետեւցընել թէ՛ որովայնահատութիւնն ուղղակի կազդէ ուռերուն վրայ :

8. Երկամանց այլ և այլ հիւանդութեանց համար երկկամահատութիւններ (Néprectomie) կատարեցինք: Մէկ հիւանդի փոխանակ երակները կապելու, խոշոր ունակներու (pince) միջոցաւ 48 ժամ դանոնք ճնշեցինք. այս միջոցը պէտք է գործածել երբ թելերը պէտք եղած ամրութիւնը չտան և կամ հիւանդին տկարութեան պատճառաւ գործողութեան տեսողութիւնն կարճեցընել հարկ ըլլայ:

9. Անտարակոյս փուշտի ջրգողութիւնն (Hydrocèle) երբ հետեւութիւնն է ամորձեաց կարեւորագոյն արտաւորման՝ դայն բուժելու միակ միջոցն է որձատութիւն կատարել, բայց երբ նա ինքնուրոյն է հետեւեալ կերպով կը գործենք. նախ հիւանդը ընդհանուր անզգայութեան չենք ենթարկել, տեղական անզգայութիւնն խիստ բաւական է և երբեմն ալ աւելորդ: Գործողութեան եղանակն է, ինչպէս նախորդ տարիներու տեղեկագրաց մէջ ալ յայտնած եմ, պատենային պատուտակն ճեղքելէ վերջ՝ դայն ամորձիքին վրայ կը դարձնեմ այնպէս որ այս վերջինն մորթին տակ առանց թաղանթի կը մնայ: Մանիշի լուծոյթի ներմղումը բոլորովին անպէտ նկատած եմ. գալով պատենային պատուտակը ծայրատելու դրութեան, թերեւս ներմղումէ աւելի լաւագոյն ըլլայ, բայց և այնպէս գործողութիւնն երկարատե է: Ուստի իրաւամբ կը նախընտրեմ դարձնելու եղանակը զոր ուրիշ հիւանդանոցներու մէջ չեն գործադրեր ցարդ:

10. Միջնայքի հատումը (Taille périneale) բոլորովին լքած և անոր տեղ ենթաորովայնային հատում (Taille hypogastrique) կը կատարենք, պարագային համեմատ կամ փամփուշտը կարելով և կամ մի քանի օր Կլեյօն-Բէրիէի խժափողը հոն ձգելով:

Ոտից և ձեռաց ջրուռոյց ունեցող և խորապէս ախտաժէտեալ ծերունի հիւանդի մը վրայ ենթաորովայնային հատում կատարելով 150 կրամ կշռող և խոշոր խնձորի մը նմանող միզային քար մը հանեցի որ մինչև ցարդ հանածներու մէջ ամենէն մեծագոյնն էր: Դժբաղդաբար հիւանդին յառաջացեալ ախտաժէտութիւնն պատճառ եղաւ իր մահուան:

11. Ուռական ամորձատապ ունեցող երիտասարդ հիւանդի մը վրայ որձատութիւն (castration) կատարեցինք Էօքայինի լուծոյթով տեղական անզգայութեան միջոցաւ:

12. Տորոմումն փոշտերակաց (varicocèle) համար, բոլոր խո-

ղովակները կը ծայրահատեմ, թողլով միայն սերմն արտածող խողովակը իր սնուցանող շնչերակով. սոյն եղանակաւ միշտ կատարեալ բուժում կուենանք:

13. Տեւատեսութեան (Hémorrhoid) և ուղղեաց անկման (Prolapsus rectal) ենթակայ 14 հիւանդներն Բաքըլէնի դանակով դարմանեցինք, ամենքն ալ կատարելապէս բուժելով՝ առանց անձկութեան հետեւանքի:

14. Դեռահաս պատանի մը որ անկման հետեւանօք կողաբեկման (Fracture costale) և Թոքաթափման (Hernie pulmonaire) ենթարկուած էր և որուն թոքին մէկ մասը մորթին տակ կը զբառնուէր առանց մորթին վրայ վէրք մը նշմարուելու՝ հետեւեալ կերպով դարմանեցինք: Մորթը ճեղքելէ վերջ թոքը ներս մխեցինք և մի քանի կողեր հատանելով պատուած և խորութեանց մէջ կծկուած թոքամիզը գտանք, կարեցինք և վէրքը փակեցինք: Սոյն գործողութիւնը հազուադէպ է և դժուար, բայց ուրախութեամբ կըսենք թէ՝ հիւանդ տղեկն կատարելապէս բուժուած մեկնեցաւ հիւանդանոցէն:

15. Ստինքի խլիրդէ (Cancer du sein) տառապող 6 կանանց վրայ ստինքի հատում կատարեցինք. պարագայ մը միայն առիթ տուաւ ինձ սոյն գործողութիւնն յիշատակելու, այսինքն անութի երակի (Veine axillaire) հատումն, որ թէև բացառութիւն մ'է, սակայն յիշեալ 6 հիւանդներէն 2 ին վրայ կատարել ստիպուեցանք այս տարի. արդարեւ այդ երակի հատումն մեծապէս օգտակար է և ախտաբանական տեսակէտով մեծ կարեւորութիւն ունի որովհետեւ յաճախ խլիրդն այդ երակն ալ կը պատէ և շատ անգամ ախտակրկնումն ալ անկից կըսկսի: Ուրեմն անութի երակի հատումն հիւանդները կը փրկէ սպառնացող ախտակրկնումէ: Այս եղանակաւ դարմանած մեր երկու հիւանդներն բուժուեցան, որով անութի երակի հատումն ասկից վերջ պէտք չէ վախ պատճառէ:

16. Արգանդատապ (Métrite) ունեցող քսան կիներու վրայ արգանդային քերում (Curetage) կատարեցինք, ասոնցմէ երեքն վիժման հետեւանօք արիւնահոսութիւն ունէին, առանց վտանգի ամենքն ալ բուժուեցան: Հէկարի մետաղեայ բայակներով (Bougie) արագ ընդլայնում, քերում և զուտ մանիշային երկնաջրով այրում:

17. Թարախուտ ջրգողութիւն թոքամզնի (Pleurésie puru-

lente) ունեցող չորս հիւանդներ կողանատութեան ենթարկուեցան: Երեք հիւանդներն բուժուեցան, իսկ չորրորդն ուռականութեան յառաջացմամբ մեռաւ:

18. Գանկոսկրի բեկման հետեւանօք ձախակողմեան կիսահարութիւն և Անխօսութիւն (Aphasie) ունեցող երիտասարդ հիւանդ մը գանկահատման ենթարկեցինք, տակաւ առ տակաւ կիսահարութիւնն անհետացաւ և հիւանդն բուժուելով մեկնեցաւ վերստացած ըլլալով նաև խօսելու կարողութիւնն: Ուրիշ հիւանդ մ'ալ գանկոսկրի ուռականութեան համար գանկահատման ենթարկուեցաւ: Այս գործողութեան համար Փառապէօֆի շաղափն (trépan) կը գործածենք որ խիստ յարմար է:

19. Ստորին ծնօտի փտու մն (Carie du maxillaire inferieur) ունեցող հիւանդի մը վարի ծնօտի աջակողմեան կէսն հանելու համար նոյն կողմէն յօդահատութիւն (désarticulation) կատարել ստիպուեցայ: Հիւանդն 40 տարեկան զինեպան մ'էր, ֆուանկախտ չուէր և ոչ լուսածնով զբաղում: Բուժումը կատարեալ եղաւ:

20. Գերածու մն նշկաց (Hypertrophie des amygdales) ենթակայ երկու հիւանդներ գարմանեցինք Մէլզօնէօֆի գործիքին միջոցաւ, այս երկու հիւանդներէն միոյն երկու նշկերն ալ մէկ անգամէն խզեցինք:

21. Կոկորդի ուռականութեան և խլիրդի ենթակայ հիւանդութիւններ թէև առժամայէս բարւոքում մը կրեցին մեր կատարած շնչափողադրութեամբ (trachéotomie), բայց դժբաղդարար մահացու ակտին յառաջացմամբ չկրցան երկար ապրիլ: Միայն կին մը որ խոչակի պողիպատի (polype) պատճառաւ անխօսութեան դատարարտուած էր շնչափողադրութեամբ բժշկուեցաւ, զի այս միջոցաւ կարողացանք պողիպատն հանել և երբ եղեգնիքն վերցուցինք կինն արդէն վերսկսած էր խօսիլ:

22. Շատ մը անհանգստութիւններ պատճառող արգանդի դանազան թեքմանց համար 9 կանանց վրայ Ալէքսանաէրի գործողութիւն և երկու կանանց վրայ ալ արգանդի անկման (Prolapsus de luterus) համար արգանդակարում (hysteropécie) կատարեցինք: Այս գործողութեանց արդիւնքը խիստ գոհացուցիչ եղաւ: Վստանութեամբ կրսեմ թէ՛ արգանդի խոտորումները և անկումը բուժելու յարմարագոյն միջոցն է Ալէքսանաէրի գործողութիւնն, հետեւաբար ճնշակներու (pessaire) գործածութիւնն զոր

ուրիշ բժիշկներ երբեմն կը յանձնարարեն՝ մեծ օգուտ մը չունին և երբէք չեն կրնար բուժել սոյն հիւանդութիւններն: Աւելին ունեցայ գործողութեան ենթարկելու կին մը որ ճնշակի գործածութեան հետեւանօք վտանգաւոր և թարախուտ չըջարգանդատապէ կը տառապէր: Նոյնպէս գործողութեան ենթարկեցինք կին մը որ արգանդի խոտորման պատճառաւ մեծ անհանգստութիւններ կը զգար և որ չէր բուժուած հակաուակ երկու տարուան ճնշակի գործածութեան:

Հետեւաբար այս գործողութեան առաւելութիւններն նկատի առնելով՝ ճնշակներու գործածութիւնն անպէտ և երբեմն ալ վընասակար կրնայ նկատուիլ:

23. Արգանդային նեարդու (Fibrome de l'utérus) ունեցող 7 կիներ ընդունուած էին, որոնցմէ երկուքն մեկնեցան գործողութիւնն մերժելով, իսկ միւս հինգ կանայք՝ արտաշնթաղանթային կոթաւոր որովայնային արգանդահատութեան (Hystérectomie abdominale à pédicule extrapéritonéale) ենթարկուեցան, շատերու կողմանէ թէև լքուած է սոյն եղանակը, սակայն և այնպէս նուազ վտանգաւոր է, հակաուակ այս առաւելութեան մենք ևս կը խոստանանք յառաջիկայ տարի ուրիշ վիրաբոյժներու պէս որովայնային ամբողջական արգանդահատութիւն (Hystérectomie abdominale totale) կատարել երբ աւելին ներկայանայ, որով այն ատեն այս երկու եղանակաց բաղդատութիւնն անձամբ պիտի կարենանք ընել:

24. Զուարանարուշտ (Kyste de l'ovaire) ունեցող կին մը գործողութեամբ բուժուեցաւ:

25. Արգանդի պարանոցի պատուածքներն (Déchirure du col de l'utérus) էմիէթի գործողութեան ենթարկեցինք՝ և միշտ բուժուեցան:

26. Արգանդափողի անձկութեան համար (Sténose du col) նախ բացակով ընդլայնում և ապա երկուստեք թեթեւ ձեղքելով ընդլայնումն կ'ամբողջացնենք. միշտ բուժում ձեռք բերինք:

27. Այս տարի մեր բաժնոյն մէջ երեք յզի կիներ միայն ճննդարեքութիւն ունեցան, առանց միջամտութեան և մէկ ամիս վերջ քաջառողջ մեկնեցան հիւանդանոցէն իրենց նորածիններով:

28. Սոււնկային յօդատապն (Arthrite fongueuse) երբ նուազ յառաջացած է՝ կը դարմանենք ջերմատաղով և դաճի մէջ կազապարելով: Բերում, քլօսիւր սը զէնկի և էթէր իօսօֆօսմէի

ներարկումներն լաւ արդիւնք չտալնուն համար խիստ քիչ անգամ կը գործածենք, իսկ երբ հիւանդութիւնն յառաջացած և կեղանկաւորած է՝ հիւանդն ազատելու համար անդամահատութիւն (amputation) ի գործ կը դնենք, գրեթէ միշտ բոլորչի մէթոտով :

29. Պօտի ցաւին (Mal de Pott) ենթակայ հիւանդներուն կամ ուղղակի և կամ նախապէս ողնայարեքուն ցցուած ելուստը (apophyses épineuses) ծայրահատելէ վերջ՝ Սէյրէսի սեղմակն կը դնենք. շատ անգամներ գործողութեամբ կուզերն ուղղած եմ ամենայն յաջողութեամբ :

30. Արմկային յօդաքոսութեան (ankylose de coude) պարագայից մէջ արմուկն կազմող երեք ոսկրաց ծայրահատում կատարելով դաստակն վերստացաւ իր կորուսած շարժումն : Այս գործողութեան մէջ պէտք է սակորներուն ծայրերէն կարելի եղածին չափ երկայն կարել :

31. Զանազան ոսկրաքեկութիւններ (fracture) ունեցող 9 հիւանդներ ևս ընդունեցանք, որոնց մի քանիինն խառնակ ոսկրաքեկութիւններ (fracture compliquées) էին և միոյն վէրքն այնչափ ծանր և գէշ դարմանուած էր մինչև մեզի հասնելուն՝ որ արեան վարակման պատճառաւ հիւանդն մեռաւ :

32. Երեք հիւանդաց վրայ յօդակապի կարում (ténoplastie) կատարեցինք ամենայն յաջողութեամբ. ինչպէս արդէն յայտնի է այս գործողութիւն աւելի ևս կը դժուարանայ երբ կտրուած յօդակապերուն (tendon) ծայրերն իրարմէ շատ հեռացած ըլլան, այն ատեն կը ստիպուինք կծկուած յօդակապերուն լայնութիւնն երկուքի բաժնել այնպէս որ յօդակապին ոչ թէ բուն երկու ծայրերը այլ երկու կողմանէ առնուած ծայրերն են որ իրարու կը կարուին. այս եղանակաւ բուժեցինք մեր երեք հիւանդներն :

Վերջացող տարւոյն մէջ կատարուած ամբողջ գործողութեանց մասին, հակառակ փափաքանացս աւելի երկար ծանօթութիւններ չպիտի կրնամ տալ : Ահաւասիկ միամեայ շրջանի մէջ մեր դարմանած ամբողջ հիւանդութեանց ընդհանուր ցուցակը

ՅՈՒՅԱԿ ՀԻՒՆԵՊԱՅ ԵԼԵԻՄՏԻՅ

Յունվար 1 ին պատրաստ	Բժշկեալք	386
հիւանդք 46	Բարուքեալք	64
Ընդունուած հիւանդք	Արձակեալք	87
1902 Յունվար 1էն մինչև	Մեռեալք	33
1903 Յունվար 1 585	Դեկ.31ին պատրաստք.	61
Գումար 631	Գումար	631

Տեղեկագիրս կնքելէ առաջ ուրախութեամբ կը յայտնեմ թէ՛ հիւանդանոցիս վիրաբուժական բաժնոյն մէջ ընդունուած հիւանդներու վրայ գիտական նորագոյն պահանջմանց համեմատ ամէն տեսակ գործողութիւններ կը կատարենք և այս մասին ձեռք բերուած յաջողութիւններն կը պարտինք Պատ. Հոգաբարձութեանդ՝ որ ամէն պարագայի մէջ մեծագոյն ազնուութիւնն ունեցած է պէտք եղած գործիք, ևն. անյապաղ մեզ հայթայթելու :

Հաճեցէք ընդունիլ այս ստիժ ևս, Պատուարժան Տեաքք, ամենախորին յարգանացս հաւաստին :

Վիրաբուժապետ Հայոց Հիւանդանոցի
ՏՕԲԹ. ԶԱՐԴԱՐՆԱՆ

7 Յունիս 1903
Հիւանդանոց Հայոց
Եէտի-Գուլէ



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱԿ ԴԱՐՄԱՆԵԱԼ ՀԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆԲ ԳԼԻՒ ԵՒ ՊԱՐԱՆՈՑԻ		Բժշկեալ	Բարւոնեալ	Արձակեալ	Մեռեալ	Առանձին գումար	Ընդհ. գումար
Բեկումն և փտտումն զանկի (Fracture et Carie du crane)	Վիրահատեալ (opéré) Ոչ վիրահատեալ (non opéré)	2 0	0 0	0 0	0 0	2 0	2
Ուղեղային Թարախուտ արենահոսում (Hemorrhagie cérébrale abcédée)	Վիրահատեալ	0	0	0	0	0	1
Փտտումն ստորին ծնոտի (Carie du maxillaire inférieure)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	2 0	0 0	0 0	0 0	2 0	2
Ատամակապճի սակրամզնի և ստամային բորբոքում (Os:és-périostite alvéolo-dentaire et fluxion dentaire)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	2 4	0 0	0 0	0 0	2 4	6
Գերածունն նշկաց և տեւական թժառույց (Hypertrophie des amygdales et Rhinites chronique)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	2 0	0 1	0 1	0 0	2 2	4
Ջրուռոյց խոչակի և խոչակային ուռականութիւն (Oedème de la glotte et tuberculose laryngée)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	0 0	0 1	0 0	1 1	1 2	3
Արտաշրջում արտւանանց և ակնագորատուայ (Extropions et Conjonctivites)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	2 6	0 3	0 4	0 0	2 13	15
Գայլցաւ լսելեայ վրանին (Lupus du pavillon de l'oreille)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	1 0	0 0	0 0	0 0	1 0	1
Ականջապատ միջին և արտաքին ականջի (Otitite externes et moyennes)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	0 1	0 0	0 3	0 0	0 4	4
Խոկային կեղանք (Fistule branchiales)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	0 0	0 0	1 1	0 0	1 1	2
Կարկամութիւն (Tétanose)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	0 0	0 1	0 0	0 0	0 1	1
	Վիրահատեալ	11	0	1	1	13	41
	Ոչ վիրահատեալ	11	6	9	2	28	

ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆԲ ԼԱՆՁԻՑ

ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆԲ ԼԱՆՁԻՑ		Բժշկեալ	Բարւոնեալ	Արձակեալ	Մեռեալ	Առանձին գումար	Ընդհ. գումար
Թորային այտոյց (Hérnie polmonaire)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	1 0	0 0	0 0	0 0	1 0	1
Մխմամբ վիրաւորում լանջից (Plaies pénétrantes du thorax)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	1 1	0 0	0 0	0 0	1 1	2
Թարախուտ ջրգորւթիւն Թորանզնի (Pleurésies purulantes chronique)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	3 0	0 0	0 1	1 0	4 1	5
Փղութիւն կողից (Caries costales)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	2 0	0 0	0 0	0 0	2 0	2
Թարախուտ տեւական սանատուայ (Mammites suppurés et chronique)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	4 0	1 0	1 1	0 0	6 1	7
Խլիթղ և խոյլամուռ տեւանց (Cancer et adéno fibrome du sein)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	7 0	0 0	0 1	0 0	7 1	8
	Վիրահատեալ	18	1	1	7	21	25
	Ոչ վիրահատեալ	1	0	3	0	4	
ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆԲ ՈՐՈՎԱՅՆԻ							
Աղեցայանկ (Hernies inguinales)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	51 0	1 0	0 7	0 0	52 7	59
Աղեցայանկ և աղերարձանկ խեղդեալ (Hernies inguinales et crurales étranglées)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	4 0	0 0	0 1	1 0	5 1	6
Աղերարձանկ (Hernie crurale)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	1 0	0 0	0 0	0 0	1 0	1
Աղեպորտանկ (Hernie ombilical)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	2 0	0 0	0 0	0 0	2 0	2
Մխմամբ վիրաւորումն որովայնի (Plaies pénétrantes de l'abdomen)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	1 1	0 0	0 0	1 0	2 1	3
Ջրապալարային բուշտ լեարդի և փայծաղի (Kystes hydatiques du foie et de la rate)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	1 0	0 0	0 0	1 0	2 0	2

ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆՔ ՈՐՈՎԱՅՆԻ
(Շար.)

		Բեղիկայ	Բարակեայ	Արմակեայ	Մեռեայ	Առանձին գուճար	Ընդհ. գուճար
Ծիրարկան լեարդախա Լայնաքի (Cirrhose atrophique de Laënnec)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	0 0	0 0	0 0	1 1	1	1
Կեղանք լեղւոյ (Fistule biliaire)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	0 0	0 0	0 0	0 1	1	1
Յաւելդետոսայ (Appendicites)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	2 0	0 0	1 1	3 3	5	5
Փամփռատոսայ, զերածունն և խղխայթ շա- գանակագեղձի (Cystites, hypertrophie et abcès prostatique)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	0 1	0 0	0 1	4 11	12	12
Անձկուծիւն միզուկի (Retrécissement de l'urethre)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	2 0	0 0	0 0	2 4	6	6
Միզային կեղանք և շուրջ միզանցարային տոսայ (Fistules urinaires et Peri-urethrites)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	2 1	0 0	0 0	3 6	9	9
Անձկուծիւն թլիփի (Phimosis)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	4 0	0 0	0 0	4 0	4	4
Ջրգողութիւն փռշտի (Hydrocèles)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	7 1	0 0	0 0	8 2	10	10
Տորմունն փռշտերակայ (Varicocèles)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	1 0	0 0	0 0	1 0	1	1
Ամորձատոսայ ջերմամիզական, ուռական և ֆրանկախտային (Orchites blenn. tuberculeux et syph)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	1 0	0 0	0 1	1 3	4	4
Չարուռ ամորձեայ (Tumeurs malignes des testicules)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	4 0	0 0	0 1	4 1	5	5
Քար փամփռշտի (Calcul de la vessie)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	0 0	0 0	1 1	1 0	1	1
Տեւատեսութիւն, անկունն ուղղաղեայ և խղխայթ սրբանի (Hémorrhoides, Prolapsus réctal, Fistules et abcès anales)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	27 4	1 1	0 0	32 7	39	39
Մտաբոյս և չարակեղ սրբանի (Végétations et chancres de l'anus)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	3 3	0 0	0 0	6 6	12	12
	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	53 11	10 9	1 19	3 2 44	67	108

**ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆ ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ
ԿԱՆԱՆՑ**

		Բեղիկայ	Բարակեայ	Արմակեայ	Մեռեայ	Առանձին գուճար	Ընդհ. գուճար
Տեւական արգանդատոսայ և բունդատոսայ (Métrites et vulvites chroniques)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	17 1	0 2	1 2	0 0	18 5	23
Դարձ և անկում արգանդի (Versions et prolapsus de l'uterus)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	11 0	0 0	0 0	0 0	11 0	11
Հոլզային և նեարդային պոլիտ արգանդի (Polypes muqueux et fibreux de l'utérus)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	4 0	1 0	0 0	0 0	5 0	5
Նեարդուռ արգանդի (Fibromes de l'utérus)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	0 0	1 0	1 0	1 0	2 0	2
Բուշտ ձուարանի (Kyste de l'ovaire)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	0 0	0 0	0 0	0 0	0 0	1
Պարզ լայն կապի և բորբորում օտանդակ մասանց արգանդի (Phlémons du ligament large et annexites)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	0 0	1 1	0 0	1 2	3	3
Վիժում (Avortements)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	4 0	0 1	0 0	1 1	5	6
Ծննդաբերութիւն (Accouchement)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	0 0	0 0	0 0	0 0	0 3	3
Անձկուծիւն և պատտուում արգանդի պարանոցի (Atresies et déchirures du cul de l'utérus)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	4 0	0 0	0 0	0 0	4 0	4
	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	44 4	3 3	1 7	3 0	51 14	65
ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆՔ ՅՕԴՈՒԱԾՈՑ ԵՒ ՈՍԿԵՐՑ							
Ազդրացու և ուռական այտոյց ծունկի (Coxalgies et tumeur blanche du genou)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	2 0	1 4	0 2	0 0	3 6	9
Պարզ յոդատոսայ, յոդաջրգողութիւն, յոդագեղուն (Arthrites simples, Hydarthroses, Entorses)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	2 4	0 3	0 0	0 0	2 7	9
Ոսկրախախտումն և յոդագոս ազդրաբարձա- յին յոդուածի և արմուկի (Luxation et ankyloses coxo-fémorales et du coude)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	1 0	0 0	0 0	0 0	1 3	4
Պոտի հիւանդութիւն, ողնակողմնակորութիւն (Mal de Potte, scoléose)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	1 1	2 2	1 1	0 0	4 6	19
Ոսկրամզնատոսայ, ոսկրածձատոսայ պատանեայ (Ostéo-périostites, ostéo- myélite des adolescents)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	1 2	0 0	0 0	1 2	2	4
Բեկունն զանազան ոսկերց (Fractures des divers os)	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	3 5	0 0	0 0	0 1	3 6	9
	Վիրահատեալ Ոչ վիրահատեալ	15 11	3 7	1 12	1 3	20 33	53

ՁԱՆԱԶԱՆ ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆՔ		ԲՆՇԻՄԱՅ	ԲԱՐԱՆՔԱՅ	ԱՐԱՆՔԱՅ	ՄԻՆՔԱՅ	ԱՆԱՅՆՈՒՄ ԳՐԱԺԱՐ	ԸՆԴՈՒՄ ԳՐԱԺԱՐ
ձարպուռ, ածառուռ, ճարպային բուշա (Lipomes, chondromes, kystes sebacés)	Վիրահատել Ոչ վիրահատել	3 0	2 0	0 0	1 0	6 0	6
Մսուռ, խլիրղ վերնամաշկի, առախուլուռ (Sarcomes, Epithelioma, Lymphadenomes)	Վիրահատել Ոչ վիրահատել	1 0	0 1	1 6	0 0	2 7	9
Մորթային վերք, կեզ, էկզեմա (Plaies cutanés, ulcérés, eczéma)	Վիրահատել Ոչ վիրահատել	2 40	0 4	0 3	0 0	2 47	49
Պալար, մասնաբաշտ, զանազան խղիսթյր (Phlegmons, panaris, abcès divers)	Վիրահատել Ոչ վիրահատել	29 0	2 1	0 1	0 0	31 2	33
Կայծակն, առանձնատապ, այրուկ (Anthrax, lymphangites, brulures)	Վիրահատել Ոչ վիրահատել	15 13	0 0	0 2	0 2	15 17	32
Խոլաստապ (Adénites)	Վիրահատել Ոչ վիրահատել	14 7	4 2	0 2	0 1	18 12	30
	Վիրահատել	64	8	1	1	74	159
	Ոչ վիրահատել	60	8	14	3	85	
ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆՔ ԱՆԴԱՄՈՑ ԾԱՅՐԵՐՈՒ							
Բաղցկեղ ծայրերու (Gangrènes des extrémités)	Վիրահատել Ոչ վիրահատել	1 0	0 0	0 0	0 3	1 3	4
Ընդլայնում անդամոց ծայրի երակաց (Varice des extrémités)	Վիրահատել Ոչ վիրահատել	0 0	0 0	0 1	0 0	0 1	1
Դաստակի սինովիալան շճաթաղանթի բուշա (Kystes synoviaux du poignet)	Վիրահատել Ոչ վիրահատել	2 0	0 0	0 0	0 0	2 0	2
Հատուկ ղեղերաց (Sections des tendons)	Վիրահատել Ոչ վիրահատել	3 0	0 0	0 0	0 0	3 0	3
Ոսկր-ածառուռ մասանց (Ostéo-chondrome du doigt)	Վիրահատել Ոչ վիրահատել	1 0	0 0	0 0	0 0	1 0	1
	Վիրահատել	7	0	0	0	7	11
	Ոչ վիրահատել	0	0	1	3	4	

Բ. Յ Ե Ս Ս Ս Ս Ս Ս Ս

Մ Ի Ա Մ Ե Ա Յ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

1902 Յունուար 1 և մինչև 1903 Յունուար 1

Տեղաբնակիչ և Տեղաբնակիչ

Պատուաբան Հոգաբարձուքան

Եկեք Գուրգի Հիւանդանոցին Հայոց

Ազնուաշուք Տեղաբնակիչ

Պատու ունիմ Ձեզ ներկայացնելու ներքակ համայնացոյց պատկերները որք Ձեզի կը ցույցեն Եկեք Գուրգի Ս. Փրկչի Հայոց Հիւանդանոցին յիմարանոցի բաժնոյն մէջ առդի ունեցած գործառնութիւնները : Տեղաբնակիչ, ասոնց ընթերցումը Ձեզի ցոյց պիտի տայ թէ՛ 1902 տարուան միջոցին նախընթաց տարիներու պէս մանողներու թիւը երնողներու թուէն աւելի եղած է, այնպէս որ յիմարներու ընդհանուր թիւը յարաճուն վիճակ մ'ունի :

Մեռնողներու թիւը գրեթէ հաւասար եղաւ նախորդ տարիներու (12, 15 0/0) որոց մեծ մասին պատճառը Ուռականութիւնն եղած է : Տարւոյս ընթացքին մէջ ջանացինք բոլոր տրամադրելի միջոցներով սահմանափակել սոյն հիւանդութեան ճարակումը :

բայց հիւանդներուն անագին խճողումը չթողարկեց մեզ զանոնք բոլորովին բառնալ : Տարւոյս մէջ քանի անգամներ իմ օգնականներուս հետ մի աւ մի քննեցի իմ բաժնոյս հիւանդներն անջատելու համար այս տեսակէտով կասկածելիներն՝ վարակման ընթացքը կասեցընելու համար :

Դժբաղդաբար մեր հիւանդասրահը հիւանդներու թուոյն համեմատական չ'ըլլալով՝ յաճախ ստիպուեցանք հիւանդները յղել հիւանդարանի ընդհանուր սրահներու մէջ , ոչ միայն անոնք՝ որք հազիւ թէ կասկածելի էին՝ և նոյն իսկ անոնք՝ որոնց քով Ուսականութեան գոյութիւնը արդէն հաստատուած էր :

Կը յուսամ թէ Պատուարժան Հոգաբարձութեանդ կողմանէ հիւանդարանիս նոր թեւ մը կառուցանելու ծրագիրը անմիջապէս գործադրութեան պիտի դրուի . այն ատեն պիտի կարենամ բաւական տեղ ունենալ յիմարներս պատշաճօրէն զետեղելու համար :

Ինչպէս քանիցս ըսած եմ՝ Ձեզ ուզողած զանազան տեղեկագիրներուս մէջ , միշտ հաստատած եմ թէ՛ մարմնական աշխատութիւնները , մտային հիւանդութեանց դարմանման մէջ մեծ ազդեցութիւն ունին : Ասոր համար չեմ վարանած իմ հիւանդներս դաշտային աշխատութիւններու մղել , գեղեցիկ օրերու միջոցներուն , մինչև անգամ զիրենք ըստ բաւականի աղատ ձգելով : Ջանալով՝ Եւրոպական յիմարանոցներու և Անվէրսի մէջ 1902 ին գումարուած յիմարանոցներու համաժողովին կողմանէ ի գիր առնուած խրատներու հետեւիլ , Ձեր թոյլատուութեամբ սովորեցուցի հիւանդներուս մէկ մասին արձակուած արհեստը , որով ձեռնուած միջոցին ալ զբաղեցան և բարեբաղդաբար իրենցմէ շատերը պէտք եղածին պէս օգտուեցան սոյն դասերէ . այնպէս որ իրենցմէ շատերը բժշկուած դուրս ելան յիմարանոցէն և կը շարունակեն սոյն արհեստը :

Ինչպէս որ կը տեսնուի , յիմարանոցին ընթացքը բաւական կանոնաւոր է , մանաւանդ եթէ ի նկատ առնուի սոյն բաժնոյն յատկացուած սանմանափակ և նեղ տեղը : Բան մը որ կը պակսի՝ այն ալ մեր ստորակարգ պաշտօնեաներուն կրթութեան պակասութիւնն է :

Տեսա՞ք , թոյլ տուէք ինձ ձեզի պարզելու այն եղանակը որով կ'ընտրենք մեր պաշտօնէութիւնը : Արդ երբոր յիմարապահի պարագ պաշտօն մ'ունենանք , կը ծանուցանենք թերթերու միջոցաւ և կ'ընդունինք անոնք որք աւելի արամադրութիւն ցոյց կուտան ապագային լաւ յիմարապահ մ'ըլլալու : Նորընտիրն անմիջապէս

յիմարապահի դերն կը կատարէ և կոչուած է հսկելու հիւանդներու . գիշերները հսկողութիւն ընելու , ի մի բան ստանձնելու միւս վարժ յիմարապահներու նման պատասխանատուութիւն մը :

Ընդհանրապէս ժողովրդեան մէջ գաղափար մը կայ որով կը կարծուի թէ՛ յիմարանոցի մը հիւանդապահները մէյ մէկ Հէրակլէաներ ըլլալու են , պատրաստ կուուելու և մարտնչելու ամէն վայրկեան :

Ընդհանրապէս ներկայացող յիմարապահի թեկնածուներն , ամենքն ալ աւ հառարակ ձկնորսներ , նաւավարներ , ջրհանկիրներ և այլն մարդիկներ են : Մինչդեռ բոլորովին սխալ է այս գաղափարը : Յիմարանոցի մը հիւանդապահը ի բայ առեալ քանի մը հոգեկան յատկութիւններէ՝ պէտք ունի մանաւանդ ունենալ բաւական բարոյական յատկութիւններ որք դժբաղդաբար կը պակսին այս անձանց քով զորս ստիպուած ենք առնելու անմիջական կերպով :

Ստիպուած եմ ուրեմն առաջարկելու Պատ. Հոգաբարձութեանդ ամբողջական փոփոխում մը ստորակարգ պաշտօնէութեան կազմակերպութեան մէջ :

Կը փափաքէի ուրեմն որ մեր պաշտօնէութիւնը հետեւեալ երեք կարգերու բաժնուի .

- Պետ յիմարապահ և փոխանորդք
- Յիմարապահք
- Ուսանող Յիմարապահք

Ինչպէս կը տեսնուի , առաջին երկու կարգերը արդէն գոյութիւն ունին . աւելցուցի ուրեմն մի միայն երրորդ մը՝ այն է ուսանող յիմարապահք որոնցմէ միայն պէտք է ընտրենք յիմարապահներ : Սոյն երրորդ կարգը ունենալու համար պէտք է նախ հաստատել հիւանդապահի դասընթացք մը՝ որ ստիպողական ըլլայ ոչ միայն հիւանդապահութեան թեկնածուներու , այլ որբերէն անոնց՝ որք կը զանուրիս այժմ հիւանդանոցի այլ և այլ աշխատանոցներու մէջ : Սոյն դասերուն հետեւիլը ոչ միայն վնասակար չը պիտի ըլլայ , այլ ընդհակառակը շատ օգտակար պիտի ըլլայ : Որովհետեւ եթէ նոյն իսկ չուզէին հիւանդապահ ըլլալ (արհեստ մը որ բաւական չահաւէտ է) Հիւանդանոցէն դուրս ալ՝ եթէ լաւ գիտնան զայն՝ իրենց շատ օգտակար պիտի ըլլայ ճանչնալ թէ ինչպէս կը խնամեն հիւանդ մը , և որոնք են նախնական դարմանները որոնց պէտք ունի վիրաւորեալ մը : Ամենէն աւելի յա-

աջադէմ աշակերտները կարգաւ, օրական վարձքով մը պիտի կանչուին փոխանորդելու հիւանդ կամ բացակայ հիւանդապահները և անոնց հետ բաժնելու բոլոր աշխատութիւնները, և ասիկա մինչև այն ատեն յորում պարագ պաշտօն մը պիտի ունենանք։ Այս կերպով պիտի կրնանք ունենալ միշտ վարժ հիւանդապահներ որք մարդուած են արդէն հիւանդներու հետ վարուելու և որոնց կարողութեան կրնանք վստահ ըլլալ։

Յայտնի է որ ըստճնկրս կը ծառայէ արանց, ինչպէս նաև կանանց բաժնոյն համար։

Վստահ եմ որ Հիւանդանոցի օժանդակ բժիշկները, որոնց զօհողութիւնը ծանօթ է արդէն, հաճոյքով յանձն պիտի աւանդ պէտք եղած դասերը աւանդել։

Գալով դիտական մասին, անցեալ տարուան միջոցին զօհող-նակութիւնը ունեցանք հաստատելու շատ մը փորձերէ վերջ զօ-յութիւնը տեսակ մը մտային հիւանդութեան որ այդէն այլ և այլ հեղինակներու կողմանէ (Քլիրրըլ, Րէժիս, Լ. Լէվի, ևն) նշա-նակուած է և որ տակաւին շատերու կողմանէ ալ չէ ընդունուած։ Կուզեմ խօսիլ Լեպտոպային խելագարութեան (Folie hépatique) վրայ։ Յիրաւի տեսանք քանի մը դէպքեր որոնց մէջ յատկանշական տե-սակէտով օժտուած մտային խանգարումներ կային, որք կը հա-մապատասխանէին լեպտոպային գեղձերու պաշտօնի խանգարում-ներու (լեպտոպային անբաւականութիւն = insuffisance hépatique)։ Դէպք մը մանաւանդ այնչափ յատկանշական եղած է որ մենք ստիպուած ենք զայն արձանագրելու մեր ցանկին մէջ, լեպտոպային խելագարում (folie hépatique) անուան տակ։

Հիւանդին հիւանդանոց մտած ժամանակ իմացանք իր ազ-գականներէն՝ որք իրեն կ'ընկերանային թէ՛ քանի մը օրերէ ի վեր ստամոքսի խանգարումներէ կը նեղուէր։ Իւր հիւանդանոց մըա-նելէն երկու օր առաջ մերժեց ճաշել և պառկեցաւ. քանի մը վայրկեան վերջը իւր ծնողքը իր սենեկին մէջ մեծ ազմուկ մը իմանալով իր քով ելան և զայն կարասիները կտարելու դրողած գտան. բարձր ձայնով կը պօռար և կը հասկցնէր այս կերպով թէ տեսողութեան զգայախաբութիւն (hallucination de la vue) կ'ունենար։ Տեղւոյն իշխանութեան կողմէ հիւանդանոցս առաջ-նորդուելով, գտանք թէ լեպտոպային անբաւականութեան օխտանի-չեր ունէր. կիսադեղնութիւն (subictère), սինդրոթիւն (constipation), անախորժութիւն (anorexie), կղկղանքի գարշահոտութիւն (fétidité des selles), մէզին մէջ հաստատուեցաւ լեզիի գոյութիւնն և բորա-

կածնային մարմիններու նուազում (urobilinurie et hypoazoturie etc)։ Մննդական շաքարամիզութեան (glucosurie alimentaire) փորձը հաստատական եղաւ։ Այսպիսի յատկանշական պարագայի մը առջև չը տարակուսեցանք, հիւանդը մասնաւոր դարմանման ենթարկել, միայն կաթնային սնունդ տալով, (calomel, salol, benzonaphtol). այնպէս որ քանի մը օր վերջը զօհողութիւնը ունեցանք հաստատելու հիւանդին մտային վիճակին հետ-զհետէ բարեփոխումը։ Սոյն վիճակին մէջ սննդական շաքարամի-զութիւնը ժխտական եղաւ։ Քանի մ'օրերէ վերջ հիւանդը մեզմէ սովորական կերակուր ուտել խնդրեց։ Իրեն մասնաւոր սնունդ կը յանձնարարեմք (կաթ և կանաչեղէն), բայց անմիջապէս դժ-բազդութիւնը ունեցանք տեսնելու լեպտոպային խանգարումները։ Մննդական շաքարամիզութիւնը վերստին հաստատական արդիւնք կուտայ։

Լեպտոպային խելագարութիւնը (folie hépatique) կը կայանայ երկու տարբեր ձևերու տակ։ Առաջինը շատ կը նմանի ապուշ մելանխոլիկոթեան (melancoli avec stupeur)։ Հիւանդը ծանր մե-լամալաճօտութեան մը երեւոյթը ունի, երբէք չխօսիր կամ շատ քիչ կը խօսի և շատ ուժատ է։

Երկրորդ կերպը կը ներկայանայ սուր ցնորական զգայախա-բութեան յատկանիշներովը (delire hallucinatoire) ընկերացած մտային շփոթութեան (confusion mentale)։ Ստէպ սոյն երկու տեսակները իրարու կը յաջորդեն։ Ի՞նչ քանի վերագրելու է ուրեմն օխտանիշերու սոյն տարբերութիւնը։ Անշուշտ թոյնի տարբերութեան։ Բայց ըստ իմ կարծեաց սոյն կէտը միայն տար-բալուծութիւնը կրնայ լուսաբանել։

Հիւանդներէն շատերը որոնց սոյն հիւանդութեան ենթակայ եղած ըլլալը կը կարծէինք՝ մեռան, և յոյժ օգտակար եղած պիտի ըլլար եթէ կարողանայինք ասոնց դիագնոստիկութիւնը կատարել։ Դժբազդաբար քաղաքիս հասարակութիւնը չ'է հասկցած տակա-ւին թէ որչափ կարևոր է սոյն քննութիւնը, և որչափ մեծ ծա-ռայութիւն մը մատուցած պիտի ըլլային դիտութեան արտօնելով դիագնոստիկութիւնը։ Ասոր համար արգելքի հանդիպեցանք այնպիսի պարագաներու մէջ յորում մեռեալներուն ծնողաց արտօնութիւնը խնդրեցինք։

Կը մագթեմ որ ի՞նչ խօսքերս լսուէին և հասկցուէին հասարա-կութեան կողմանէ, որպէս զի կարողանայինք աւելի արդիւնք ունենալ ապագային։

Լեարդային խելագարութիւնները կարծուածէն աւելի հասարակ են: Ըստ իմ կարծեաց ասիկա պէտք է վերագրել մեծ մասամբ ոգելից ըմպելեաց հանապազօրեայ և շարունակ գործածման: Մինչև իսկ փոքր քանակութեամբ ամենօրեայ գործածուած ոգելից ըմպելիքը լեարդային գեղձին կը յլեատէ, և յառաջ կը բերէ ինքնաթունաւորման երեւոյթներ, եթէ ո՛չ թունաւորման:

Վերջացնելէս առաջ, Պատուարժան Անդամք, թոյլ տուէք ինձ շնորհակալութիւններս յայտնել իմ նախկին օժանդակիս Տօքթ. Գազազեանի, ինչպէս նաև նոր օժանդակիս Տօքթ. Պողոսեանին իրենց եւանդագին գործունէութեան համար զորս միշտ ցցուցած են իրենց պարտականութեանց կատարման մէջ, ինչպէս նաև ոչ խառնուողի գործաւնութեանցս մէջ իրենց օժանդակութեամբ:

Հաճեցէք ընդունիլ, Վսեմաշուք Ատենապետ էֆ. և Պատ. Տեարք Անդամք, իմ և իմ ստորակարգելոցս մաղթանքները նոր տարւոյ սութիւ և հաւատալ ինձ

Ձերդ անձնուէր

ՏՕՔԹ. ՄՕՆՃԷՐԻ

Յիմարարոյժ Եէտի Գուլէի Հայոց Հիւանդանոցի

1/14 Յունուար 1903

Եէտի Գուլէի Հայոց Հիւանդանոց



ԱՌՏԱՐԱՆԱԿԱՆ ՅՈՒՅԱԿ ԱՐԱՆՅ ՅԻՄԱՐԱՆՈՅԻ

ԱՌՏԱՆՈՒՆՔ	Պատուարժան 1901 Յունուար 1	ԸՆԴՈՒՆՈՒՄ		ՄԵԿԵԱԾ				Մեկ էլ	Պատուարժան 1901 Յունուար 1
		Գուրսն	Հիւանդանոցին	Հիւանդանոց	Բժեկէլ	Բարւոյնէլ	Արձակէլ		
Բորբոքեալ մոլեգնութիւն (Exalt. maniaque)	0	1	0	0	0	0	0	0	1
Մոլեգնութիւն (Մուր (Aiguë)	2	6	0	0	2	1	0	1	4
(Folie) (Տեւական (Chronique)	13	0	0	0	0	0	0	0	13
(Folie) (Անցողական (Transitoire)	2	0	0	0	0	0	1	1	0
Յիմարութիւն (Շրջուն (Circulaire)	1	1	0	0	0	0	0	0	2
(Folie) (Լեարդային (Hepatique)	0	1	0	0	0	0	0	0	1
Անձնապանծ դասաւորեալ ցնորք (Délire systématisé expansif)	12	1	0	0	0	0	0	0	13
Ախտնդացու (Hypocondrie)	0	1	1	0	2	0	0	0	0
Պարզ սեւամտղձութիւն (Mélancolie simple)	31	9	0	0	2	2	0	6	30
Տխրամոլութիւն (Lypémanie)	9	6	1	0	1	4	0	1	10
Ապուշ սեւամտղձութիւն (Mélanc. avec stupeur).	1	2	0	0	0	0	0	1	2
Անձկալից սեւամտղձութիւն (Mélanc. anxieuse)	1	0	0	0	0	0	0	0	1
Անձնապատ դասաւորեալ ցնորք (Délire systématisé depressif)	8	0	0	0	0	0	0	2	6
(Կանխասնաս (Précoce)	18	7	0	0	0	5	0	2	18
(Անցողական (Transitoire)	1	0	0	0	1	0	0	0	0
Խօշորութիւն (Հետեւական (Consécutive)	22	1	0	0	0	0	0	2	21
(Demence) (Գոնորական (Alcoolique)	1	0	0	0	0	0	0	1	0
(Ներութեան (Sénile)	0	5	2	1	0	0	0	3	3
(Կաթուածական (Apopléctique)	0	1	0	0	0	0	0	1	0
Յառաջխաղայ ընդհանուր անդամալուծութիւն (Paralysie générale progressive)	7	6	3	0	0	2	0	8	6
Տկարամտութիւն (Imbecillité)	33	6	1	0	0	4	0	3	33
Ապշութիւն (Idiotie)	6	2	0	0	0	0	0	0	8
Գոնորականութիւն (Alcoolisme)	10	1	0	0	1	1	0	0	9
Լուսնտուութիւն (Epilepsie)	22	6	1	0	0	6	0	3	20
Յիմարութիւն չհաստատուած (Reconnus non aliénés)	1	4	0	2	2	0	0	0	1
Ի ըննութեան (En observation)	1	2	0	1	0	0	0	0	2
	202	69		4	11	25	1	35	204

ԱՆՏԱՐԱՆԱԿԱՆ ՅՈՒՅԱԿ ԿԱՆԱՆՅ ՅԻՄԱՐԱՆՈՅԻ

ԱՆՏԱՆՈՒՆԻՔ	Պատասխան 1902 թվական	ԸՆԴՈՒՆՈՒՄ		ՄԵԿԱՆՑ				Մեկուս 1902 թվական	
		Գուրտն	Հիւանդա- նոցէն	Հիւանդանոց	Բժշկում	Բարոսիում	Արձակում		
Բորբորեալ մոլեգնութիւն (Exalt. maniaque)	3	2	0	0	0	1	0	1	3
(Մուր (Aiguë)	2	4	0	0	3	0	0	0	3
Մոլեգնութիւն (Տեւական (Chronique)	8	0	0	0	0	0	0	0	8
(Manie)	4	1	0	0	0	0	0	1	4
(Մնացողական (Transitoire)	1	3	0	0	4	0	0	0	0
(Մանրական (Puerpérale)	1	0	0	0	0	0	0	0	1
Յիմարութիւն (Հիստերական (Hysterique)	1	0	0	0	0	0	0	0	1
(Folie)	3	0	0	0	0	0	0	0	3
(Զգայարմական (Sensorielle)	1	0	0	0	0	0	0	0	1
(Բարոյական (Morale)	0	1	0	0	1	0	0	0	0
Մուր զառանցանք (Délire aiguë)	4	0	0	0	0	1	0	0	3
Անձնագանձ դասաւորեալ ցնորք (Délire systé- matisé expnsif)	1	0	0	0	0	0	0	0	1
Զուգախեւուցութիւն (Folie à deux)	8	8	0	0	3	1	1	1	10
Պարզ սեւամաղձութիւն (Mélancolie simple)	5	2	0	0	1	1	0	1	4
Տխրամոլութիւն (Lypémanie)	1	0	0	0	0	0	0	0	1
Ապուշ սեւամաղձ. (Mélancolie avec stupeur)	2	0	0	0	1	0	0	0	1
Անձկալից մեղմաղձութիւն (Mélanc. anxieuse)	0	2	1	0	1	1	0	1	0
Անձնագատ դասաւորեալ ցնորք (Délire systémati- sé dépressif)	1	2	0	0	0	0	1	0	2
(Կանխահաս (Précoce)	2	0	0	0	0	0	0	0	2
(Բորբորեալ (Agitée)	1	0	0	0	0	0	0	0	1
Խօլութիւն (Նախնական (Primitive)	8	2	0	0	0	0	0	2	8
(Démence) (Հետեւական (Consécutive)	2	3	0	0	0	0	0	2	3
(Մեղմութեան (Sénile)	1	0	0	0	0	0	0	1	0
(Կամուսածային (Apopléctique)	2	3	1	0	0	0	2	2	2
Յառաջխտող ընդհանուր անդամաւորութիւն (Pa- ralysie générale progressive)	17	4	0	0	0	2	0	1	18
Տկարամտութիւն (Imbécillité)	9	4	0	0	0	0	1	1	11
Ապղութիւն (Idiotie)	8	0	0	0	0	0	0	0	8
Լուսնոտութիւն (Epilepsie)	1	1	0	0	0	1	0	0	1
Հիպոքրի (Hystérie)	1	1	0	1	0	0	0	0	1
Ի քննութեան (En observation)	97	43	2	1	14	8	5	14	100

Գ. ՈՐԲԱՆՈՑ

Մ Ի Ս Մ Ե Ա Յ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ա. Փ. ԱՐԶԵՍՏԱՆՈՑ-ՈՐԲԱՆՈՑԻ

1901 Սեպտեմբերէն մինչեւ 1902 Օգոստոս

Դ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Տ Ա Ր Ի Ո Ց

Մեզ զօրավիզ ունենալով Պատ. Հրգարարձուլեանդ վստա-
հութիւնն ու թանկագին աջակցութիւնը՝ բոլորեցինք 1901-1902
դպրոցական տարւոյ շրջանը, որոյ վիճակը կը փութամք ներկայել
Պատկ. Ժողովոյդ :

Ա. Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն

Ըստ կազմական կանոնադրի Որբանոց-Վարժարանն ունեցաւ
Նախակրթարանի երեք դասընթացքները և Նախապատրաստական
դասարան մը :

Նախապատրաստական դասարանը կազմուեցաւ 25 աշակերտ-
ներով՝ իր առանձին ուսուցչով :

Տարբ. Դասընթացքի Ա. Տարւոյ դասարանը կազմուեցաւ 30
աշակերտներով՝ իր առանձին ուսուցչով :

Տարբ. Դասընթացքի Բ. Տարւոյ դասարանը կազմուեցաւ 31
աշակերտներով՝ իր առանձին ուսուցչով :

Միջին դասընթացքի Ա. Տարւոյ դասարանը կազմուեցաւ 34
աշակերտներով՝ իր առանձին ուսուցչով :

Միջին դասընթացքի Բ. Տարւոյ դասարանը կազմուեցաւ 27
աշակերտներով՝ իր առանձին ուսուցչով :

Բարձրագոյն դասընթացքի Ա. Տարւոյ դասարանը կազմուե-
ցաւ 26 աշակերտներով՝ իր առանձին ուսուցչով :

Բարձրագոյն դասընթացքի Բ. Տարւոյ դասարանը կազմուեցաւ 25 աշակերտներով՝ իր առանձին ուսուցչով : (25 + 30 + 31 + 34 + 27 + 26 + 21) = 194 աշակերտ համագումար :

Այս շրջանին մէջ ևս ունեցանք մէկ դաստիարակ՝ շաքաթահան արձակուրդով բացակայ դաստիարակին տեղ պաշտօնավարելու համար . հետեւաբար պաշտօնավարեցին 8 մնայուն դաստիարակ ուսուցիչներ բաց ի Տեսչին : Ունեցանք նաև 5 այցելու ուսուցիչ՝ կրօնագիտութեան , թուրքերէն լեզուի , դժագրութեան , դեղագրութեան և եկեղեցական երաժշտութեան համար , ինչպէս նաև Օսմ. պատմութեան համար Հասարակաց կրթութեան նախարարութեան կողմէ կարգեալ թուրք ուսուցիչ մը : Այսպէս Որբանոցիս ուսուցչական խումբը կազմուեցաւ անցեալ տարւոյ նման 15 պաշտօնեայններով և ամսական 4500 զրուշով :

Աղջկանց որբանոցի ներքին կարգադրութիւններն և դասարաններու բաժանումը՝ մանչերու Որբանոցի մէջ ի գործ դրուած կարգադրութեանց յար և նմանն եղան :

Կազմուեցան Նախապատրաստական դասարան մը

Տարբ. Դասընթացքի Ա.	դասարանն	34 երկսեռ աշակերտներով
»	» Բ.	14 » »
»	» Բ.	22 » »
Միջին	» Ա.	14 աշակերտուհիներով
»	» Բ.	12 »
Բարձր.	» Ա.	8 »
Գումար		104

Բարձր. դասընթացքի Բրդ տարին չկազմուելով՝ նախորդ տարւոյ Բարձր. Դասընթացքի Ա. Տարւոյ սակաւաթիւ աշակերտուհեաց հետ միացան միջին Բ. Դասարանի աշակերտուհիք և կազմեցին դարձեալ Բարձր. դասընթացքի Ա. տարին : Յառաջիկայ շրջանին յուսալի է կազմել Բարձր. դասընթացքի Բրդ տարին ևս :

Պաշտօնավարեցին մնայուն 5 դաստիարակ-ուսուցչուհիներ և մէկ այցելու ուսուցչուհի ձեռագործական աշխատութեանց համար :

Աւելցնելով աղջկանց որբանոցի պաշտօնէից սոյն թիւն մանչերու որբանոցի պաշտօնէից թուոյն վրայ՝ կուեննանք երկսեռ որբանոցի համար ուսուցչական խումբ մը 21 անձերէ բաղկացեալ և 9 պաշտօնեայ՝ ընդամենը 7000 զրշ. ամսականաւ :

Տարեշրջանին մէջ Տօքթ. Տաղաւարեան էֆ. անցեալ տարուան պէս աւանդեց աւուղջաբանութիւնն 20 դասերով և կենդանաբուծութիւնն՝ նոյնպէս 20 դասախօսութիւններով :

Իւրաքանչիւր դաստիարակ և դաստիարակուհի իր դասարանի աշակերտաց և աշակերտուհեաց գլխաւոր դասերը աւանդելէ զատ՝ փոփոխակի կարգաւ այցելեցին միւս դասարանները և աշակերտք ու աշակերտուհիք ընդունեցին այսպէս մէկէ անելի ուսուցչաց այցելութիւնները :

Ուսմանց զանազան ճիւղերը կանոնաւորապէս և հաւասար խնամքով աւանդուեցան : Մասնաւոր հոգածութեան և ուշադրութեան առարկայ եղան աշակերտաց բարոյական կրթութիւնը և կրօնական պարտականութեանց սնթերի կատարումը :

Ամէն ամսոց վերջ յանձնուեցան աշակերտաց և աշակերտուհեաց ամսօրեայ վիճակացոյցներ , որոնց վրայ նշանակուած էին իրենց վարուց և ուսմանց իւրաքանչիւր ճիւղի համար ստացած թուոց միջինները : Այս առիթներով հրապարակային գովեստի արժանացան և մրցանակներով վարձատրուեցան ու քաջախիտեցան բարձր թիւեր ստացող աշակերտներն և աշակերտուհիներն , որոնց անունները արձանագրուեցան պատուոյ տախտակին մէջ , իսկ թոյլ և յետադէմ , ինչպէս նաև ոչ գոհացուցիչ վարքի մէջ զբոսնողներն յորդորուեցան իրենց բարի և յառաջադէմ ընկերներու օրինակին հետեւելու :

Նախակրթարանի աշակերտք , իրենց ուսումնական աշխատութիւնները կատարելէ զատ՝ միջին դասընթացքէ սկսեալ մինչև բարձրագոյն դասընթացքի աշակերտք , օրական 1 ժամ արհեստաւորաց մէջ ձեռտկան աշխատութեամբք , իսկ աղջկուցք ասեղ-նագործութեամբ , կարի և ձեւի աշխատութեամբ զբաղեցան :

Բոլոր աշխատութիւնք կը կատարուին յատկապէս պատրաստուած ժամանակացոյցի համաձայն : Աշակերտք և աշակերտուհիք ունին օրական 4 ժամ դաս և 4 1/2 ժամ սերտողութիւն , 1 ժամ յատկացուած է մաքրութեան և յարդարանքի , 1 1/2 ժամ նախաձաշի , ճաշի և ընթրիքի , 4 ժամ զբօսանքի և 9 ժամ քնոյ :

Յատուկ ժամանակացոյց մը կը զործադրուի կիրակէ և տօն օրերու համար , յորս առաւօտները աշակերտք և աշակերտուհիք

եկեղեցի կ'երթան, իսկ կէս օրէ վերջ կը պարապին ընթերցմամբ և սերտողութեամբ և պտոյտ կամ զբօսանք կ'ընեն :

Տարեշրջանիս մեջ Որբանոց վարժարանն երկրորդ անգամ ընծայեց Ազգին շրջանաւարտ պատանիներ, թուով ութն, որոնք ըստ օրինի ներկայանալով շրջանաւարտից Գննիչ յանձնաժողովոյ՝ իրենց աւարտական քննութիւնները յաջողութեամբ անցուցին և ստացան «Վկայական շրջանաւարտի նախակրթական ուսմանց» Պատ. Ուսումն. Խորհրդոյ կողմանէ :

Անուանի օրջանաւարտից . — Գէորգ Գէորգեան (Մալաթիացի), — Գրիգոր Զաքարեան (Բալուցի), — Մանուէլ Օյմաեան (Մալաթիացի), — Յարութիւն Մուրատեան (Խարբերդցի), — Յովհաննէս Կորիկեան (Քղիցի), — Նազարէթ Նաճառեան (Հիւսնի Մանսուրցի), — Ոսկեան Յակոբեան (Պանտրմացի), — Ստեփան Համամլեան (Կ. Պօլսեցի) :

Այս շրջանաւարտներէն երկուքը Ազգ. Հիւանդանոցի դեղարանը դրուեցան դեղագործութիւն ուսանելու համար, 1 ը Կեդրոնական վարժարան ընդունուեցաւ, 2 ը հիւանդանոցի մէջ արհեստի կըզբաղին, 1 ը հայրենիք ուղեւորեցաւ, 1 ը սկսաւ գործի պարապիլ, իսկ մին մնաց Որբանոցս իւր ուսումը շարունակելու համար :

Անցեալ տարուան շրջանաւարտներէն երկուքը, որոնք փափաքած էին կրկնել իրենց ուսումը Որբանոցիս մէջ, մեկնեցան յարկէս, մին յանձնուեցաւ իր պաշտպանին, և միւսը Պէրպլեան վարժարան դրուեցաւ իր պաշտպանին միջոցաւ :

Մայիս ամսոյ 23 ին, Որբանոցիս դպրոցական տարեշրջանը լրանալուն մօտ, Ս. Համբարձման տօնի օրը սեղի ունեցաւ Որբանոցիս տարեկան հանդէսն ըստ սովորութեան, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, և ի ներկայութեան Պատ. Հոգաբարձութեանդ և հանդիսականաց, այս առթիւ Նորին Սրբազնութեան և Պատուարժան Հոգաբարձութեանդ ներկայացուեցան Որբանոց վարժարանի վերոյիշեալ 8 և Արուեստանոցի յետագայ 16 աշակերտներն: Ս. Պատրիարք Հայրը բանախօսելով այս հանդէսի առթիւ իր գոհութիւնն յայտնեց եղած ջանից և ցոյց տրուած արդեանց համար՝ զորս ի մօտոյ տեսնելու առիթ ունեցած էր Նորին Սրբազնութիւնն իր յաճախակի այցելութիւններով՝ և հայրական օրհնութիւններով քաջալերեց և խրախուսեց աշխատող մարմինները :

* * *

Որբերուն և որբուհիներուն սնունդը, զգեստը, բնակարանը, սուողական վիճակը և բժշկակ սն խնամքը . — Ինչպէս միշտ՝ այս շրջանիս մէջ ալ որբերն ու որբուհիները շարունակաբար ստացան գոհացուցիչ սնունդ, առանձին հոգածութեամբ : Առաւօտները տրուեցաւ անոնց կաթ կամ թէյ հացով, ցերեկները և երեկոյները մսեղէն կամ ձէթով կերակուր : Բաց աստի՝ տկարակազմ սղայոց համար մասնաւոր սնունդ ևս տրուեցաւ, մսեղէն, կաթնեղէն և հաւկիթ :

Աշակերտք և աշակերտուհիք ստացան 2 անգամ նոր զգեստ : Մանչերու ամառնային զգեստները՝ Որբանոցիս ոստայնանիլ արհեստարանին մէջ գործուած կտաւէն շինուեցան : Իւրաքանչիւր աշակերտ ու աշակերտուհի տարուան մէջ ստացաւ երեք և ի հարկին չորս զոյգ կօշիկ :

Երկսեռ որբերուն առողջական վիճակն գոհացուցիչ եղաւ : Բժշկական խնամք և առողջապահական միջոցք անդու ի գործ դրուեցան :

Մանչերու Որբանոցին մէջ Տօք. Նահապետեան էֆ կանոնաւորապէս այցելեց շաբաթը 3 անգամ, հոգ տանելով տղայոց առողջական վիճակին: Տօքթօրը տարւոյ մէջ 163 անգամ այցելեց, պատուաստեց և կրկին պատուաստեց 27 աշակերտներ . իսկ որբուհիներուն առողջական վիճակին խնամքն ու հոգածութիւնը յանձնուած է Հիւանդանոցի բժշկաց որք պարբերաբար կ'այցելեն: Մի քանի աշակերտներ և աշակերտուհիներ ունեցան աչքի և ալիանջի տկարութիւններ, զորս դարմանեցին աղնուաբար Տօքթ. Էմէրեան և Տօքթ. Տատուր էֆէնտիները :

Ինչպէս Որբանոցիս տկարակազմ աշակերտներն ու աշակերտուհիներն՝ նոյնպէս որբերուն և որբուհիներուն մեծագոյն մասը կը խմեն ձմեռը ձկան իւղ, օրը երկու անգամ, սպառելով օրական 3-4 քաշ ձկան իւղ :

Այս տարեշրջանիս մէջ հիւանդացան 139 աշակերտներ և 52 աշակերտուհիներ, որոնցմէ 2 աշակերտ կնքեցին իրենց մահկանայուն :

Տղայոց մարմնական կրթութեան համար կարելին ի գործ կը դրուի միշտ, տղայք ընդհանրապէս բացօթեայ կը շրջին, կը շրջապային, աղատօրէն կը խաղան և կըզբօսնուն: Ամառը կը վայե-

լին երկու ամիս արձակուրդ, յորում ծովու լողանք կ'ընեն և դաշտային պտոյտներ կը կազմակերպեն :

Վերջացնելէ առաջ կրկին Որբանոցներուս վերաբերեալ սոյն հակիրճ տեղեկութիւնքն, Պատ. Հոգաբարձութեանդ լուրջ ուշադրութեան կը յանձնեմք հետեւեալ յոյժ կարեւոր խնդիրներն՝ որոնք արգելք եղած են մեր որբերուն առողջական և ուսումնական վիճակին առաւել բարւոքման :

Ա. Աղջկանց վարժարանի շէնքին վերջին աստիճան անձուկ վիճակը և յիմարանոցի ու հիւանդարանի մասերու հետ անմիջական շփման մէջ գտնուիլը :

Աւելորդ է պարզել այս կացութեան փափուկ հասակներու վրայ ունեցած ազդեցութիւնն ու հետեւանքները . ննջարաններու ինչպէս նաև դասարաններու ու սեղանատան տարապայման անձկութիւնն ու խճողումը, ոչ նուազ արգահատելի է նաև մանչերու Որբանոցի ննջարանին խարխուլ վիճակը և դասարաններու անձկութիւնը :

Բ. Տարւոյն ամբողջ ընթացքին մէջ աշակերտներու ընդունելութիւնը, քանի որ ստիպուած ենք նոյն իսկ տարւոյն չըջանի վերջը եկողներն իսկ ընդունիլ, ինչպէս կը տեսնուի թէ տարւոյս դպրոցական չըջանը սկսելէ վերջը որքան աշակերտներ ընդունուած են :

Գ. Չ'եմք կարող Որբանոցէս հանել այնպիսիներ՝ որոնց ներկայութիւնը մեծ վնաս է հաստատութեան . ինչպէս նաև չեմք կրնար չընդունիլ անոնք որք անյարմար են ուսման :

Բ. Ա Ր Ո Ւ Ե Ս Ս Ա Ն Ո Յ

Որբանոցիս արուեստանոցի աշխատութիւնք և գործառնութիւնք շարունակուեցան այս չըջանիս մէջ միևնոյն ուղղութեամբ և կանոնաւորութեամբ, աւելի յուսալից և անցեալ երկու տարիներու արդիւնքովը քաջալերուած : Հաստատութեանս մէջ գործադրուած այս կարեւոր ձեռնարկն, որ կոչուած է որբերու ապագան պատրաստելու և ապահովելու, մէկ կողմանէ Պատ. Հոգաբարձութեանդ հոգածութեան և սրաշտպանութեան տակ յարատե գոյութեան ամենէն հաստատուն երաշխիքն ունի, միւս կողմէ ուրախութեամբ կը յայտնենք թէ որբերու աշխատութեանց ար-

տադրութիւններն հանրութեան համակրութիւնն կը գրաւեն և կ'արդարացնեն անոր քաջալերութիւնն որ հետզհետէ կ'ընդհանրանայ և նոր ապահովութիւններ կ'ընծայէ արուեստանոցի արդիւնաւորութեան և յարատեութեան :

Որբանոցիս մէջ կը գտնուին հինգ արհեստարաններ . կօշկակարութեան, դերձակութեան, ամթուադործութեան, ոստայնակութեան և կահադործութեան : Կօշկակարութեան արհեստարանը հաստատուած է 1899ի սիկդրը և ունի չորս տարուան գոյութիւն : Դերձակութեան, ամթուադործութեան և ոստայնակութեան արհեստարանները 1900 Մարտ 1ին բացուած ըլլալով կը շարունակեն 3 տարիներէ ի վեր : Իսկ կահադործութեան արհեստարանը 1901 Մայիսին հաստատուեցաւ :

1. Կօշկակարութեան արհեստին հետեւած են ցարդ 30 աշակերտներ, որոնց 15 ը մեկնած են թէ իբրև չըջանաւարտ և թէ չըջանաւարտ ըլլալէ առաջ, միւս 15 ը կը շարունակեն իրենց աշխատութիւնները :

2. Դերձակութեան արհեստին հետեւեցան 12 աշակերտներ, որոնց 3 ը մեկնած են իբրև չըջանաւարտ, իսկ մին առանց չըջանաւարտ ըլլալու : Մնացեալ 8 ը կը շարունակեն դեռ իրենց աշխատութիւնները :

3. Ամթուադործի արհեստին հետեւեցան 18 աշակերտներ, որոնց 3 ը իբրև չըջանաւարտ և 5 ը առանց չըջանաւարտ ըլլալու մեկնած են, մնացեալ 10 ը կը զբաղին տակաւին իրենց գործերով :

4. Ոստայնակի արհեստարանը ունեցած է ցարդ 12 աշակերտներ, որոնց 3 ը չըջանաւարտ եղան, 4 ը առանց չըջանաւարտ ըլլալու մեկնեցան, իսկ 5 ը կը զբաղին դեռ իրենց աշխատութիւններով :

5. Կահադործարանը իր այս առաջին չըջանին մէջ ընդունած է 10 աշակերտներ, որոնց 8 ը կը շարունակեն դեռ զբաղիլ իրենց հետեւած արհեստին, իսկ 2 ը արձակուած են առանց չըջանաւարտ ըլլալու :

Հետեւաբար Որբանոցիս արհեստարաններու մէջ 1899 էն ի վեր աշխատած են 82 աշակերտներ, որոնց 16 ը անցեալ տարի օրինական չըջանն աւարտելով և 20 ը առանց իրենց չըջանը աւարտելու մեկնած են : Մնացեալ 46 էն 16 ը այս չըջանիս վերջը կը մեկնին իբրև չըջանաւարտ, զորս երկրորդ անգամ կ'ընծայենք և որոնց յաջորդներն պիտի որոշուին ընդհուպ՝ օրական 1 ժամ արհեստի զբաղող նախակրթարանի աշակերտներէն :

Արհեստաւոր աշակերտք ևս պարտաւորիչ կերպով զբաղեցան ուսմամբ օրը 2 ժամ : Իրենց ուսման առարկաներն եղան Մայրենի լեզու , կրօնագիտութիւն , թուաբանութիւն , թուրքերէն և զըծագրութիւն . այս կերպով արհեստաւոր աշակերտք իրենց արհեստին հետեւելով հանդերձ՝ ստացած են նաև նախակրթութեան կարեւոր և անհրաժեշտ տարրերն :

Անուանի բազմաւարտ արհեստաւոր աշակերտաց . — Կօշիկարի . — Տիրան Սիմօնեան (Ակնցի) , — Մարգիս Գալէնտէրեան (Ակնցի) , — Յարէթ Յովնանեան (Մալաթիացի) , — Միքայէլ Չիլպօղոսեան (Մալաթիացի) , — Գրիգոր Պարսամեան (Մալաթիացի) , — Յովհաննէս Սիմօնեան (Խարբերդցի) , — Երուանդ Չուհաճեան (Բաղէշցի) :

Աթոռագործ . — Լեւոն Միքայէլեան (Իզմիրցի) , — Մատթէոս Գէորգեան (Սիլիվրիցի) :

Դերձակի . — Օննիկ Յակոբեան (Կ. Պօլսեցի) , — Գէորգ Եղաճեան (Մալաթիացի) , — Միքայէլ Գըզըլքէշլիզեան (Մալաթիացի) , — Աեղբաք Փափազեան (Կ. Պօլսեցի) , — Խաչատուր Գազանճեան (Պիրէճիկցի) :

Ուսայնանկ . — Մարիմ Յակոբեան (Պրուսացի) :

Կահագործ . — Պօղոս Կարապետ Շաքարեան (Խարբերդցի) :

Այս շրջանաւարտ 16 աշակերտաց յատկացուած են շաքաթական վճարումներ , որոնց համագումարը կը կազմէ 370 զրուշ , իւրաքանչիւրին բաժինն ըլլալով 200 էն մինչև 300 զրուշ :

Այս գումարներն վճարուեցան իրենց՝ իբրև միջոց մը իրենց անմիջական պէտքերն հոգալու և հայթայթելու՝ Որբանոցէս մեկնելու պահուն :

Վերոյիշեալ շրջանաւարտ աշակերտներն , Որբանոցիս տարեկան հանդիսի առթիւ , իրենց առ Ազգն երախտագիտութեան ուղերձն մատուցանելէ յետոյ Ամեն . Ս. Պատրիարք Հօր՝ ինքնաբերաբար և հաւաքաբար 5 օսմ. ոսկի նուիրեցին իրենց աշխատութեան արդիւնքէն ի նպաստ իրենց դաւաճացի եղբարց :

Խնամակալութիւնս քաջալերեալ արհեստաւորաց այս արդիւնքներէն , մանաւանդ Պատ. Հոգաբարձութեանդ աշակցութեան և պաշտպանութեան ապաւինելով , որոշած է նոր մղում մը տալ արհեստարանաց յառաջդիմութեան և այս նպատակաւ պիտի հրաւիրէ երկու վարպետներ կահագործարանի ճիւղին համար , մին սովորեցնէ աշակերտաց փայտի վրայ քանդակագործութիւնը և միւսը ճախարակագործութիւնը :

Մեծ յոյս ունինք որ Պատ. Հոգաբարձութեանդ շնորհիւ պիտի յաջողինք աւելի բարեփոխելու և զարգացնելու Որբանոց-Վարժարանի և Արուեստանոցի վիճակը յօգուտ պատասպարեալ հարիւրաւոր երկսեւ որպերու և յատաջիկային ևս զոհացուցիչ արդիւնքներ ընծայելու , փոխարէն Ձեր ջանից և զոհողութեանց :

Տարեշրջանիս մէջ Որբանոցս ընդունուած աշակերտաց թիւն է 47 , աշակերտութիւններուն թիւը 13 : Աւելցնելով այս նորեկները տարւոյ սկիզբը աշակերտաց և աշակերտութեանց պատրաստ թուոյն (294) վրայ , համագումարը կը լինի 354 աշակերտ և աշակերտութիւն , պատասպարուած և խնամուած երկսեւ Որբանոցներուն մէջ :

Տարւոյս մէջ մեկնած են 36 աշակերտ և 8 աշակերտութիւն , հետեւաբար Օգոստոս 31 ին ներկայից թիւն էր 242 աշակերտ և 68 աշակերտութիւն , ի միասին 310 : Մեկնողներն են 7 շրջանաւարտք նախակրթարանի ճիւղէն , 13 շրջանաւարտ Արուեստանոցի ճիւղէն . արձակուած , իրենց ծնողաց յանձնուած և իրենց հայրենիքը դարձած են 22 աշակերտ և աշակերտութիւն , իսկ մեռած են 2 աշակերտ , ընդ ամենն 44 հոգի :

Որբանոցս ունէր թոշակաւոր աշակերտ և աշակերտութիւն , որոնց վճարած թոշակաց գումարն է 9318 1/2 զրուշ :

Երկսեւ Որբանոցներու զրական պիտոյից համար ծախսուած է 6351 1/2 զրուշ , իսկ կրթական պաշտօնէից և 9 սոցաւաւորաց համար 83241 զրուշ , համագումար կրթական ծախսուց 87592 1/2 զրուշ :

Ի դիմաց Խնամակալութեան Ս. Յակոբայ Որբանոց-Արհեստանոցի

Ասեմաղպիւր	Վ. Ասեմաղպէսի
Լ. ԲԱՆԻԿՅԱՆ	Յ. ԳՈՐԵԱՆ



ՄԻՍՄԵԱՅ ՀԱՇՈՒԵՑՈՅՑ Ա. ԳՅԱԿՈՒԱՅ ԱՐՀԵՍՏԱՐԱՆԱՅ

1902 Յունվար 1-ին Դեկտ. 31

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ո Ւ Ծ Ա Ռ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Կոշկի արհեստարան, պատրաստ նիւթք Յունվար 1ի	7019	75		
Գնեալ նիւթք և գործաւորաց վարձք	39262	25	46282	
Աթոռի արհեստարան, պատրաստ նիւթք Յունվար 1ի	2645			
Գնեալ նիւթք և գործաւորաց վարձք	9527	50	12172	50
Դերձակի արհեստարան, պատրաստ նիւթք Յունվար 1ի	1294	25		
Գնեալ նիւթք և գործաւորաց վարձք	6476	50	7770	75
Կահագործի արհեստարան, պատր. նիւթք Յունվար 1ի	6253	75		
Գնեալ նիւթք և գործաւորաց վարձք	10427	50	16681	25
Ոստայնանկի արհեստարան, պատրաստ նիւթք . . .	200			
Գնեալ նիւթք և գործաւորաց վարձք	5665	75	5865	75
Չանազան ծախքեր, գրասենեկի վարձք, մթերանոցի ծախք, և պաշտօնէկց ամսականք			5106	25
			9387	50
			21048	25
			114926	75
Գոյացեալ շահ				

Կոշկի արհեստարանի արտադրութեանց արժողութիւն	57850	75		
Աթոռի » » » » »	15835			
Դերձակի » » » » »	9732	50		
Կահագործի » » » » »	11655			
Ոստայնակի » » » » »	8340	75	103414	
Կոշկի արհեստարան պատրաստ նիւթք Դեկտ. 31	3384			
Աթոռի » » » » »	1317	50		
Դերձակի » » » » »	953	25		
Կահագործի » » » » »	4494	50		
Ոստայնանկի » » » » »	1363	50	11512	75
			114926	75

Վ Ի Ճ Ա Կ 1 9 0 2 Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր 3 1 Ի

Չորս արհեստարանաց պատրաստ նիւթք	11512	75		
» » » գործիք	9082			
Պատրաստ (չինուած) ապրանք, աթոռք և այլն	7314			
» ապրանք, մթերանոց-գրասենեկի մէջ	4692	50	32601	25
Պահանջք Ազգ. Հիւանդանոցէն	30389	75		
» զանազաններէ	8331		38720	75
Պատրաստ գրամ			1772	50
			73094	50

Չանազանաց պարտք	6759			
Դրամագլխին » (200 ժամ. ոսկի)	21600		28359	
Վիճակ Դեկտեմբեր 31ի			44735	50
			73094	50

Գ. ԾԵՐԱՆՈՅ ԵՒ ԱՆԿԵԼԱՆՈՅ

Ծերանոցն՝ անոք ծեր աղգայնոց յատկացեալ վայր մ'է, իսկ անկեւանոցն՝ աշխատելու անկարող, անաէր անձանց, փորձանաւոր աղջկաց ու լքեալ կանանց յատուկ է:

Աշխատելու կարող անկեալները թիթե աշխատութեանց կը գործածուին:

Հաստատութեանս մէջ ծնեալ և կամ ընկեցիկ Պատրիարքարանի կողմանէ ղրկուած մանուկք Հաստատութեանս զաւակ կ'անուանուին, որք ապա մերթ հոգեղաւակ կը տրուին և մերթ Որբանոցիս ուսմանց չըջանն աւարտելէ ետք արհեստի մէջ կը վարժուին, ի չափահասութեան մանչերու ճամբայ կը դրուի և աղջիկները կ'ամուսնացուին, ինչպէս նաև պատուարեալ անոք աղջիկներն:

Այժմ ունինք 145 ծեր և անկեալ որոց 101ը այր են և 44ը կին կամ աղջիկ:

Ե. ՈՒՍԱՆՈՂՔ

Ուսանողք կ'անուանենք այն ամէն արական սեռէ որք ուսնապաշտպան պատանիներն՝ որք կամ մայրաքաղաքիւր մէջ մի բարձրագոյն վարժարան կը յաճախեն և կամ մի արհեստի կը հետեւին (ի քաղաքիս կամ ի Հաստատութեանս):

Այս պատանիներն ընդհանրապէս Որբանոցիս չըջանաւարտներ են, երբեմն ալ ուսման անյարմար որբեր և կամ դրսէն եկողներ:

Այժմ ունինք 31 ուսանողներ, որոց 2ը բժշկական վարժարանի, 4ը դեղագործութեան վարժարանի, 6ը կեղորձական վարժարանի կը հետեւին, իսկ 5ը մոմագործութիւն, 5ը դեղագործութիւն, 3ը թիթեղագործութիւն, 1ը դերձակութիւն, 2ը ատաղձագործութիւն կ'ուսանին և երեքը Հաստատութեանս Տնօրէնութեան դիւանի օժանդակ գրագիրներ են:

Զ. ՄՈՄԱՐԱՆ

Մոմարանս՝ Հաստատութեանս հասոյթից մի կարեւոր աղբիւրն է: Կ. Պոլսոյ ժողովրդեան հարսանեաց և եկեղեցեաց լուսաւորութեան մոմերն աստի գնուիլը պարտաւորիչ ըրած է Հայոց Պատրիարքարանը:

Հաստատութեանս մոմարանը՝ մայրաքաղաքիս նոյնատեսակ գործարանաց առաջինը կրնայ համարուիլ և ամենայնիւ կրնայ գերազանցել զանոնք:

Մոմարանիս գործարանի պետն՝ Որբանոցի վարդափ սաներէն է, որոց կ'աջակցին ուսանողաց դասակարգէն 5 որբեր:

Մոմարանս՝ քաղաքիս մէջ և հոգարարձութեանս գրասենեկին կից մասնաւոր վաճառանոց մ'ունի, ուր տեղի կ'ունենան գնումներն ու ապսպրանքները:

Ի ստորև կը ներկայացնենք մոմարանիս 1902 տարւոյ մատակարարութեան և հաշուեկշռի ցուցակներն:

Մ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն 1902 Յունուար 1-է ցլերչ Գեկեկների

Մ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն		Կ Շ Ի Ռ	
	Պր.՝		Պր.՝
Զանազան ծախք	2809	Պատրաստ ապրանք ի գործարանի	85775
Պաշտօնէկից ամսական	8400	» » ի վաճառատան	7524
Գրասենեկի վարձք	960	» կարտիք	2056
Զէն ու շահ	750	Պահանջ զանազաններէ և եկեղեցիներէ	21279
Գիւսնական ծախք	110	Պատրաստ դրամ	293
Յաւելեալ շահ	23932		66928
	36961		
Գործարանէն եղած շահ ապրանաց վրայ	75		
վաճառատունէն » »	50		
նիւթեղէն նուէր	811		
Դրամական »	5059		
	36961		
	25		
	66928		
		Պատրաստ դրամագլուխ	66928
			66928

ՄԱՍՆ Բ.

ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՍ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍԵՐԸ




Ա. ԴԵՂԱՐԱՆ

Հաստատութեանս ղեղարանն ունի երկու վկայեալ ղեղադործ և չորս աշակերտ ուսանողաց դասակարգէն :

Դեղարանն կը պատրաստէ ոչ միայն Հիւանդանոցիս շուրջ 200 հաւանդաց աւօրեայ ղեղադրերն , այլ և յիմարաց , ծերոց , անկեւոց և որոց մէջ թեթե տկարութիւն ունեցողներու համար բժիշկներու կողմանէ հրահանգեալ ղեղերն , որով աւօրեայ շուրջ աւելի քան 250 ղեղադրեր կը պատրաստուին ամենայն կանոնաւորութեամբ :

Ըստ հաստատութեանս մայր տոմարին տարւոյս չրջանին մէջ սպառեալ ղեղօրէից գումարը կը բարձրանայ 37,274 3/4 զրուշի :

1902 Դեկտ. 31 ին ղեղարանս պատրաստ ունէր 5163 զրուշի ղեղ և շուրջ 1500 զրուշի գոյք (կարասի , գործիք , ևն) :



Բ. ՀԱՆԴԵՐՁԱՏՈՒՆ , ԼՈՒԱՑԱՐԱՆ , ՑՆՑՈՏԱՏՈՒՆ

ԵՒ ԲԱՂԱՆԻՔ

Հանդերձատուն կ'անուանի հաստատութեանս հանդերձեղինաց յատուկ նիւթերու մթերանոցն , ուր միշտ պատրաստ կը գտնուին մասնաւոր քանակաւ ճերմակեղէնք , ղգեատեղէնք , և ասոնց պատրաստութեանց յատուկ նիւթեղէններ :

Հանդերձապահի խնամոց յանձնուած են նաև հաստատութեանս գոյից և այլ մթերանոցներն :

Լուացարանն յանձնուած է մի պետ լուացարարուհեոյ , ուր կ'աշխատին ամսականաւոր լուացարարուհիներէ զատ և Անկեւանոցի աշխատելու կարող կիներն :

Հաստատութեանս ճերմակեղինաց պատրաստութիւնն , կարկըտուքներն ու արդուկն՝ ընդհանրապէս Անկեւանոցի պատասպարեալ կանանց միջոցաւ տեղի կ'ունենան :

— Յնցոտատուն (Պէյթիւլմալ) կ'անուանենք հիւանդաց , յիմարաց և պատասպարելոց սեպհական ղգեատներու մթերանոցն որ և հանդերձապահի հսկողութեան յանձնուած է : Հաստատութեանս մէջ մեռնող պատասպարելոց ղգեատեղէններն հաստատութեանս կը մնան և ամիսն անգամ մը կը վաճառուին , որ տարեկան 30-40 ոսկեոյ շահ մը կը թողու հաստատութեանս : 1902 տարւոյ մէջ Յնցոցատան արդիւնքն եղած է 3303 1/2 զրուշ :

Բաղանիքի և ջրի ջեռոցներն ընդ հսկողութեամբ հանդեձապահի են :

Հանդերձատան տարեկան սպառումն է շուրջ 800-900 ոսկի . 1902 տարւոյ մէջ սպառեալ հանդերձեղինաց գումարն եղած է ըստ մայր տոմարի 101,077 3/4 զրուշ . իսկ նորոգութեան ծախսն 606 1/4 զրուշ : Դեկտ. 31ին պատրաստ ունէինք Հաստատութեանս մէջ 205,405 զրուշի հանդերձեղէնք , որոյ մանրամասն ցուցակն ի ստորե կը պատկերենք :

Տարւոյս շրջանին մէջ սպառեալ (մաշած և կտորած) կարասեաց գումարն ըստ մայր տոմարի 10,148 1/2 զրուշի կը յանգի . իսկ նորոգութեան ծախսը 7600 1/4 զրուշի : Դեկտ. 31 ին պատրաստ ունէինք 263,402 զրուշի կարասի , որոյ մանրամասն ցուցակն ևս ի ստորե կը տեսնուի :

ՊԱՏՐԱՍՏ ՀԱՆԴԵՐՁԵՂԵՆՔ

(1902 Դեկտ. 31 ին)

1484	հատ Սեղանի անձեռոց	1484
103	» Սեղանի ծածկոց	1030
478	» Գողնոց	34
		<hr/>
	Վերածելի Ղրշ.	2548

	Վերածեալ	Ղրշ.	
		2548	
490 հատ ծէս		1960	
680 » Վարագոյր		2040	
12 » Շալ		60	
133 » Խըրքա		1330	
388 » Գիշերանոց դտակ		388	
2 » Ծրար մկրտութեան		30	
		50	
1134 » Եազմա		10100	
505 » Ժաքէթ կամ ապա պլուզ		8120	
406 » Տափատ		2010	
30 » Առանին պարեգօտ (ոսպ տը շամպրը)		500	
62 » Վերարկու		360	
18 » Բռնաշապիկ (քամիզօլ տը ֆօրս)		250	
36 » Բաճկոնակ		600	
2245 » Թաշկինակ		650	
13 » Չեռնակալ (գարսօլ)		2450	
49 » Գօտի (կաշի)		105	
21 » Սանտր		128	
128 » Չեռաց անձեռոց		90	
30 » Խըսիրէ խողանակ		220	
44 » Խաւու բաղնիքի		232	
116 » Ղենջակ		6940	
347 » Շրջազգեստ		540	
135 » Ասուեակէ շապիկ		68	
17 » » վարտիք		270	
27 » Երկայն ֆլանէլ		2450	
290 » Պօլիկ կամ դամիզօլ		25	
25 » Գասգէզ տղայոց		630	
63 » Երկայն շապիկ		640	
8 » Կօշիկ (չիզմէ)		10	
25 » Փողկապ տղայոց		160	
